ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«----» դեկտեմբերի 2012թ. **N_____Ն**

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետին և 83-րդ հոդվածին համապատասխան՝

Երևան քաղաքի ավագանին *որոշում է՝*

1. Հաստատել Երևան քաղաքի զարգացման 2012 թվականի ծրագիրը՝ համաձայն հավելվածի։

2. Սույն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի զարգացման 2012 թվականի ծրագիրը ենթակա է հրապարակման «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 56-րդ և 63-րդ հոդվածներով սահմանված կարգով, իսկ ծրագրի հիմնական ցուցանիշները, վիճակագրական և գրաֆիկական տվյալները՝ նաև առանձին տեղեկատուներով և գրքույկներով։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևանի զարգացման 2012 թվականի ծրագիրը» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևանի զարգացման 2012 թվականի ծրագիրը» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում էական փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 212 ԹՎԱԿԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Համաձայն Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 83-րդ հոդվածի՝ Երևանի զարգացման ծագիրը փաստաթուղթ է, որը բովանդակում է Երևանի սոցիալ-տնտեսական վիճակը, ինչպես նաև զարգացման հիմնական ուղղությունների, տարածական պլանավորման և ենթակառուցվածքների ընդհանուր զարգացման վիճակի վերլուծությունն ու կանխատեսումները: Համաձայն նույն օրենքի 83-րդ հոդվածի 2-րդ կետի՝ Երևանի քաղաքապետը կազմում և ավագանուն է ներկայացնում Երևանի զարգացման միամյա, քառամյա, երկարաժամկետ և հատուկ ծրագրերը:

Հիմք ընդունելով վերը շարադրածը և այն, որ Երևանի քաղաքապետը տարեկան բյուջեի նախագիծը մշակելիս հաշվի է առնում Երևանի բնակչության կենսական շահերը, Երևանի զարգացման ծրագրերը, ինչպես նաև առկա ռեսուրսները, որոշման նախագծով Երևանի ավագանու հաստատմանն է ներկայացված «Երևան քաղաքի զարգացման 2012 թվականի ծրագիրը»:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Նախագիծ

Հայաստանի Հանրապետություն

Երևանի քաղաքապետարան

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐ

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ 1
Բաժին 1. Ներածություն 2
Քաղաքաշինություն և ճարտարապետություն 3
Շինարարություն և բարեկարգում, ճանապարհաշինություն 6
Արտաքին լուսավորություն 7
Տրանսպորտ 7
Կոմունալ ոլորտ 10
Նուբարաշենի աղբավայր 12
Առևտուր և սպասարկում 12
Բնապահպանություն 13
Եկամուտների հաշվառում և գանձում 14
Անշարժ գույքի կառավարում 14
Ներդրումային ոլորտ 15
Արտաքին ձևավորում և զովազդ 15
Կրթություն 16
Առողջապահություն 17
Սոցիալական ապահովություն 18
Երեխաների իրավունքների պաշտպանություն 18
Երիտասարդության հետ տարվող աշխատանքներ 19
Ֆիզիկական կուլտուրա և սպորտ 19
Մշակույթ 19
Տուրիզմ 20
Բաժին 2.Հիմնախնդիրներ և 2012 թվականին նախատեսվող միջոցառումներ 21
Բաժին 3. Երևանի վարչական շրջաններ 38

Ն Ե Ր Ա Ծ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Երևանն աշխարհի հնագույն քաղաքներից է: Այն հիմնադրել է Արգիշտի Առաջին թագավորը մ.թ.ա. 782թ.:

Երևանը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիս-արևելյան մասում, զբաղեցնում շուրջ 227.0 քառ.կմ տարածք: Սահմանակից է ՀՀ Արագածոտնի, Կոտայքի, Արարատի և Արմավիրի մարզերին: Մայրաքաղաքի բնակչությունը կազմում է 1112.9 հազ. մարդ, որը ՀՀ բնակչության 34.4 %-ն է:

Երևանը նաև խոշոր արդյունաբերական, գիտական և մշակութային կենտրոն է: Այն ՀՀ գլխավոր օդային դարպասն է իր երկու՝ «Զվարթնոց» և «Էրեբունի» օդանավակայաններով:

Մայրաքաղաքում են գործում Գիտությունների ազգային ակադեմիան և իր էությամբ եզակի՝ հին ձեռագրերի կենտրոն Մատենադարանը, տասնյակ գիտական հաստատություններ, շուրջ 70 համալսարաններ և ինստիտուտներ, երկու տասնյակ թատրոններ և մոտ 60 թանգարան, համերգասրահներ, մարզական կենտրոններ: Այստեղ են գտնվում օտարերկրյա պետությունների 25 դեսպանատներ և 21 հյուպատոսություններ, արտերկրյա ֆինանսական, հասարակական և մշակութային հաստատությունների հայաստանյան գրասենյակներ, Հայաստանում գործող բանկերը, ֆինանսական հաստատությունները:

Երևանի զարգացման 2012 թվականի ծրագրի նպատակն է Երևան քաղաքի կայուն և համաչափ զարգացման ապահովումը, բնակչության կենսական շահերը և բարեկեցությունը, մարդկային զարգացումը՝ որպես հետևանք երաշխավորելով երևանցիների կյանքի որակի էական բարելավումը:

Երևանը պետք է դառնա էլ ավելի մաքուր, կանաչ ու բարեկարգ, աշխատանքի և կարգուկանոնի, հարմարավետ, ավանդույթների և ապագայի քաղաք:

Հաշվի առնելով Երևան քաղաքի սոցիալ-տնտեսական զարգացումն ապահովող ոլորտների հիմնախնդիրներն ու գերակայությունները՝ Երևանի զարգացման 2012 թվականի ծրագիրը նախանշում է այդ ոլորտների և վարչական շրջանների առանձին միջոցառումների պլանավորումը:

2012 թվականին քաղաքի զարգացման հիմնական ուղղությունները միտված են լինելու մայրաքաղաքի ենթակառուցվածքների զարգացմանը, բնակչության կենսապայմանների բարելավմանը, բարեկեցիկ ու հարմարավետ միջավայրի ձևավորմանը, ինչպես նաև Գլխավոր հատակագծին համապատասխան քաղաքաշինական ծրագրերի իրականացմանը:

Ծրագիրը մշակվել է՝ հաշվի առնելով ՀՀ Ազգային անվտանգության ռազմավարության և ՀՀ կառավարության 2008-2012 թվականների ծրագրերի, ինչպես նաև Երևանի զարգացման 2010-2013թթ. ծրագրի հիմնադրույթները, բովանդակում է Երևանի սոցիալ-տնտեսական վիճակը և զարգացման հիմնական ուղղությունների, տարածական պլանավորման և ենթակառուցվածքների ընդհանուր զարգացման վիճակի վերլուծությունն ու կարճաժամկետ կանխատեսումները, Երևանի վարչական շրջանների զարգացման ծրագրերը, ինչպես նաև առկա ռեսուրսները:

Ծրագիրը ներկայացնում է Երևան քաղաքի ընդհանուր վիճակի բնութագիրը, քաղաքային տնտեսության առանձին բնագավառներում և վարչական շրջաններում առկա հիմնախնդիրները, ինչպես նաև 2012 թվականին նախատեսված միջոցառումները:

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Քաղաքաշինության բնագավառում Երևան քաղաքի հաստատված Գլխավոր հատակագծի դրույթներին համապատասխան անցած տարիներին մշակվել և ներդրվել են ոլորտի ներդրումային գրավչությանը և գործարար միջավայրի բարելավմանն ուղղված համալիր ծրագրեր՝ նպատակ ունենալով Երևան քաղաքի համաչափ տարածական զարգացման առաջնահերթության սկզբունքի արմատավորումը:

ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 15-ի N 2330-Ն որոշմամբ հաստատվել է Երևան քաղաքի Գլխավոր հատակագիծը: Այն գործողության մեջ է դրվել 2006թ-ից, որով նախանշվել էին քաղաքի զարգացման հեռանկարները մինչև 2020 թվականը:

ՀՀ կառավարության 2006 թվականի սեպտեմբերի 7-ի «Երևան քաղաքի Գլխավոր հատակագծի 2006-2020թթ. իրականացման հիմնական միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» հ. 1402-Ն որոշման համաձայն.

միջոցառումների ծրագրի հստակ ժամանակացույցով, 2006-2009 թվականների ընթացքում մշակվել են մի շարք ծրագրային քաղաքաշինական և նախագծանախահաշվային փաստաթղթեր:

- մշակվել և Երևանի քաղաքապետի, հետագայում նաև Երևան քաղաքի ավագանու որոշումներով հաստատվել են մի շարք քաղաքաշինական՝ Երևան քաղաքի որոշ վարչական շրջանների, ինչպես նաև քաղաքի առանձին տարածքների գոտիավորման նախագծեր և առաջնահերթ շինարարության կառուցապատման էսքիզներ:

Մասնավորապես գոտիավորման նախագծեր են մշակվել և հաստատվել Կենտրոն, Արաբկիր, Աջափնյակ, Նորք-Մարաշ, Դավթաշեն, Շենգավիթ թաղային համայնքների և քաղաքի առանձին տարածքների համար.

- կազմվել են նաև այլ ծրագրեր
- կատարվել են գույքագրման աշխատանքներ
- այլ միջոցառումներ

2006-2008թթ. ընթացքում իրականացվել է Երևան քաղաքի Գլխավոր հատակագծի իրացման միջոցառումների մոնիթորինգի աշխատանքներ, որով վերահսկվել և ամրագրվել է նախանշված միջոցառումների կատարման ընթացքը:

2009թ. իրականացվել են Երևանի Գլխավոր հատակագծի նախագծի իրացման վերլուծություն և մինչև 2020թ. շինարարության ծրագրի կազմման աշխատանքներ:

Երևան քաղաքի Գլխավոր հատակագծի իրացման վերլուծության և նախորդ տարիների մոնիտորինգի արդյունքների հիման վրա, հիմք ընդունելով Երևանի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան քաղաքի բյուջեի մասին հ.56-Ն և Երևանի քաղաքապետի 2010 թվականի հունվարի 18-ի հ.74-Ա որոշումները, «Երևաննախագիծ» փակ բաժնետիրական ընկերության կողմից 2010-2011թթ. կատարվել են Երևան քաղաքի Գլխավոր հատակագծի ճշգրտման աշխատանքները:

Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի հհ. 31, 32 կետերի համաձայն քարտեզների տեսքով մշակվել և Երևան քաղաքի ավագանու քննարկման է ներկայացվել «Երևան քաղաքի քաղաքային նշանակության գովազդային գոտին» և «Երևան քաղաքի քաղաքային նշանակության քաղաքաշինական գոտին», որոնք սահմանվել են ավագանու 2009 թվականի հուլիսի 6-ի հ.13-Ա որոշմամբ և 2010թ. վերանայվել են դրանց սահմանները:

Կատարվել են Ավան և Աջափնյակ վարչական շրջաններում (այդ թվում նաև Տիչինայի փողոցին և Սիլիկյան թաղամասին հարակից տարածքում) կառուցապատման նպատակով հողաբաժանման սխեմաների մշակման աշխատանքներ՝ աճուրդային կարգով հողամասերի վաճառք իրականացնելու համար:

Երևանի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի հրապարակային սակարկություններով (մրցույթներով և աճուրդներով) տրամադրման և օտարման նպատակով 2011թ. նախապատրաստվել են թվով 229 փաթեթներ (223 հատ աճուրդ, 6 մրցույթ)։ Հողամասերը նախատեսված են հիմնականում անհատական բնակելի տների կառուցման, ինչպես նաև բազմաբնակարան շենքերի կառուցման, հասարակական և այլ բնույթի կառուցապատման համար:

Երևան քաղաքի փողոցաճանապարհային ցանցի կատարելագործման նպատակով համաձայնեցված նախագծի հիման վրա վերակառուցվել և շահագործման են հանձնվել Ծիծեռնակաբերդի խաճուղին և Դավիթ Բեկ փողոցը (Սարի-Թաղի խաչմերուկից մինչև Ռոստովյան փողոց հատված):

Գլխավոր պողոտայի՝ Սարյան փողոցի և Մաշտոցի պողոտայի միջանկյալ հատվածում ընթացել են վերակառուցման աշխատանքներ:

2011թ. ընթացքում իրականացվել են նաև.

- Նախագծային ճանապարհների և փողոցների համար պատվիրվել են և կազմվել են նախագծանախահաշվային փաստաթղթեր
- Բագրևանդ փողոցի վերակառուցում
- Սիլիկյան թաղամաս տանող ճանապարհի վերակառուցում
- «Ալմաստ» գործարանի ե/գ կայարանի հարակից տարածքի ճանապարհ

Հետիոտնային անցումներ

Հետիոտնի տեղաշարժման անվտանգության ապահովման և տրանսպորտի անարգել աշխատանքի նպատակով մշակված հետիոտն անցումների (վերգետնյա կամ ստորգետնյա) կառուցման ծրագրով 2011թ. կառուցվել են թվով 3 վերգետնյա հետիոտն անցումներ

- Ազատության պողոտայում՝ Լ.Տոլստոյի անվան հ.128 դպրոցի մոտ
- Դավիթ Անհաղթ փողոցում ՝Եվրոպական համալսարանի շենքի մոտ
- Շիրազի փողոցի հ.26 շենքի դիմաց

2011 թվականին հետիոտն վերգետնյա անցումների համար նախատեսվել են նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում և որոշների համար հայտարարվել են նախագծման մրցույթներ.

- Արշակունյաց պողոտայում ՝ «Սուրմալու» առևտրի կենտրոնի մոտ (շին. 2012թ., առկա է ՃՀԱ)
- Լենինգրադյան փողոցում՝ «Սեբաստիա» մանկապարտեզի մոտ (շին. 2012թ., առկա է ՃՀԱ)
- Գ.Հասրաթյան փողոցում (շին. 2012թ., առկա է ՃՀԱ)
- Թբիլիսյան խճուղու հ.22/9 հասցեի մոտ (առկա է ՃՀԱ)
- Ագաթանգեղոս-Խորենացի փողոցների հատման մասում
- Իսակովի պողոտայում՝ նոր կառուցված հեծանվահրապարակի մոտ
- Հավանության են արժանացել վերգետնյա անցումների համար նախատեսվող հետևյալ թվով 5 հասցեները
- Արշակունյաց պող.-Շահամիրյանների խաչմերուկ («Գրանդ Քենդիի» մոտ)
- Խանջյան-Չայկովսկի փ. Խաչմերուկ (դպրոցի մոտ)
- Մյասնիկյան պող.՝ Զրաշխարհի դիմաց
- Կոմիտասի պող.՝ «Երևան Սիթի» սուպերմարկետի մոտ
- Հալաբյան-Արզումանյան փող. խաչմերուկ
- Հետագա լրացուցիչ ուսումնասիրությունների դեպքում հնարավոր կհամարվեն նաև հետևյալ թվով 3 հասցեները
- Ազատության պող.-Վարշավյան փող. Խաչմերուկ
- Սարի թաղ.՝ Նոր ճանապարհի վրա (իրացման խնդիր)
- Չարենցի փող. Հ.10 դպրոցի մոտ (իրացման խնդիր)

Տեղազննմամբ հնարավոր են համարվել նաև հետևյալ թվով 11 հասցեները

- Ռուբինյանց-Ահարոնյան փող. խաչմերուկ
- Ազատամարտիկների փող. Հ.194 դպրոցի մոտ
- Ազատամարտիկների-Ս.Դավիթ–Կուստոյի փող. խաչմերուկ (թաղապետարանի մոտ)
- Աճառյան-Ծարավ Աղբյուրի փող. խաչմերուկ
- Արտաշիսյան փող.՝ հիվանդանոցի մոտ
- Բ.Մուրադյան փող.՝ Ռազմական ակադեմիայի մոտ
- Դ.Բեկի փող.՝ Հայորդաց տան մոտ
- Էրեբունու փող.՝ ավտոդպրոցի մոտ
- Տ.Մեծի պող.՝ Հ.119 դպրոցի մոտ
- Գ.Չաուշ-Մելքումովի փող. խաչմերուկ
- Մոլդովական-Բագրևանդի փող. խաչմերուկ

Քաղաքաշինության ոլորտում ներդրումային ծրագրերի զարգացման ուղղությամբ

Մասնավոր տարբեր ներդրողների հետ քննարկումներ անցկացնելու համար կատարվել են քաղաքի կոնկրետ տարածքների նախնական ելակետային նյութերի վերլուծություններ, որոշակի տվյալների հավաքագրումներ, գրանցված գույքերի, հողօգտագործողների հաշվառումներ, դրանց հիման վրա կազմվել են սխեմատիկ նյութեր.

- Խանջյան-Թումանյան-Հանրապետության փողոցներով պարփակված թաղամաս (9-րդ թաղամաս՝ 0.4հա)
- Ջրմուղի տարածք և հարակից հատվածներ (Սարալանջի փող. և Մյասնիկյան պող.՝ 3.18հա)
- Վ.Սարգսյան փող. հ.3 հասցեում (նախկին ՀՀ արդարադատության շենքի տարածք)
- Կայրանամերձ հրապարակին կից կիասակառույցի տարածք
- Նախկին տրամվայի հավաքակայանի տարածք (3.9հա)
- Երևանյան լճից դեպի հարավ-արևմուտք և Իսակովի պողոտայից հարավ ընկած ճահճոտ տարածք (40հա) մանկական զվարճանքների, հանգստի, և այգեպուրակային տարածքի ստեղծում
- Բուզանդի փող (3462.57 քմ)

Հավանություն է տրվել Հ.Թումանյան և Ա.Պետրոսյան փողոցների հարող հատվածում քաղաքաշինական ներդրումային ծրագրին (բազմաբնակարան շենքի կառուցման), պատրաստվել է Երևանի քաղաքապետի որոշման նախագիծ:

Երևան քաղաքում հուշարձանների տեղադրման ներկայացված առաջարկների քննարկումներ և անկացված մրցույթներ.

- Հայ բարերարների այգի: ՀՀ սփյուռքի նախարարության նախաձեռնությամբ և ՀՀ կառավարության որոշմամբ, Օղակաձև զբոսայգու 4-րդ հատվածում հիմնվեց հայ բարերարների քանդակներով այգի:
- Ալեքսանդր Մանթաշյանցի (հայ մեծանուն բարերար) հուշարձանը պատրաստ է, տեղադրման հետ կապված հարցերն ընթացքի մեջ են:
- Հայ օգնության միության 100-ամյակին նվիրված «Կռունկներ» հուշարձան (տեղադրվել է)
- Գարեգին Նժդեհի հուշարձան (քննարկումներ են եղել, նոր մրցույթ է կայացել, ընդունվել է քաղաքապետի որոշում)
- Դերենիկ Դեմիրճյանի հուշարձան (արձանը առկա է, տեղի ընտրությունը կատարված է, դեռևս չի տեղադրվել)
- Կարեն Դեմիրճյանի հուշարձան (տեղի ընտրությունը կատարված է, սակայն արձանի մրցույթը կհայտարարվի 2012թ.)
- Ֆրիտյոֆ Նանսենի հուշարձան (տեղադրվել է)
- Չեռնոբիլի և այլ միջուկային աղետների ու վթարների հետևանքով տուժածների և զոհվածների հիշատակին նվիրված հուշակոթող (նախագիծն ընթացքի մեջ է)
- Ա.Պուշկինի հուշարձան (տեղի ընտրության հարցը քննարկվում է)
- Երկաթուղայիններին նվիրված հուշարձան (տեղադրվել է)

- Ռոդենի Ժյուլ Բաստյեն Լեպաժ քանդակը (տեղադրվել է Ֆրանսիայի հրապարակում)

Բակային տարածքներ

Բակային տարածքներում բնակչության հանգստի և ժամանցի կազմակերպման, բարեկարգման, սպորտային և այլ խաղահրապարակների ստեղծման համար նախանշված ծրագրի շրջանակում 2011թ. բակերում տեղադրվել են խաղային սարքավորումներ (240 հատ լրակազմ հավաքածու), լուծվել են արտաքին լուսավորության խնդիրները, վարչական շրջանների առաջարկությամբ նշված հասցեներում «Երևաննախագիծ» ՓԲԸ-ի կողմից կատարված նախագծով տեղադրվել են թվով 11 փոքր ֆուտբոլի դաշտեր:

Մինի բացօթյա շուկաներ

Փողոցային առևտրի կարգավորման նպատակով Երևանի տարբեր հատվածներում մինի գյուղատնտեսական ապրանքների բացօթյա շուկաների կազմակերպման համար քննարկվել և տարածքների առաջարկություններ են ներկայացվել: կայացվել է Երևանի քաղաքապետի որոշում մինի շուկաների կառուցման համար Մհեր Մկրտչյանի անվ. հրապարակում՝ Կասյան փող. և Կոմիտաս պող. հատման մասում, ինչպես նաև Կիլիկիա թաղամասի հրապարակին կից տարածքում:

2011թ. մեկնարկել են.

- Կաթողիկե եկեղեցու համալիրի (Աբովյան փող. հ.15 հասցեում) շինարարությունը
- Սիսակյան փող. հ.22 շենքի շինարարությունը (վթարային շենքերից բնակիչների վերաբնակեցման նպատակով կառուցվող շենք)

2011թ. ավարտվել և շահագործման են հանձնվել.

- «Զվարթնոց» օդանավակայանի նոր տերմինալը
- Ծ. Իսակովի պողոտայի հ.27/8 հասցեում «Ռենկո Արմէստեյտ» կազմակերպության կողմից կառուցված հեծանվահրապարակը
- Շառլ Ազնավուրի տուն թանգարանը՝ Կասկադ համալիրում

Շինարարություն և բարեկարգում, ճանապարհաշինություն

Երևանի քաղաքապետարանի հաշվեկշռում ընդգրկված են 27 կամուրջներ և կամրջային կառուցվածքներ, որոնց ընդհանուր երկարությունը կազմում է մոտ 3700 մետր: Երևանի քաղաքապետարանում հաշվառված են հետիոտնային 50 անցումներ: Փողոցների և հրապարակների ընդհանուր մակերեսը կազմում է 15,9 մլն քմ:

Ելնելով Երևան քաղաքի փողոցների ծանրաբեռնվածությունից 2011թ. ծրագրով կառուցվել են 3 վերգետնյա անցումներ՝ Ազատության պողոտայում, Դավիթ Անհաղթ փողոցում և Շիրազի փողոցի հ.26 շենքի դիմաց:

2011թ. կատարվել է 248 շենքերի մաքրման աշխատանքներ:

Մայրաքաղաքի ջրային կառույցներն են՝ Հանրապետության Հրապարակի շատրվանները, «Կարապի լիճ» ջրավազանը, Օղակաձև զբոսայգու 3-6–րդ հատվածների 8 շատրվանները, «Հաղթանակ» զբոսայգու արհեստական լիճը, Գետառ, Ջրվեժ և Ողջաբերդ գետերը:

Երևանի քաղաքապետարանի 2010-2011թթ. ծրագրերով բակային տարածքների բարեկարգման նպատակով մայրաքաղաքի վարչական շրջաններում տեղադրվել են մինի–ֆուտբոլի դաշտեր, յուրաքանչյուր շրջանի 1-ական բակում:

2011թ. ջեռուցման համակարգեր են տեղադրվել ինչպես նախադպրոցական ուսումնական հաստատություններում, այնպես էլ մշակութային կենտրոններում և երաժշտական դպրոցներում: Ջեռուցվել են ևս թվով 18 ՆՈՒՀ–եր, 9 երաժշտական դպրոցներ և 10 մշակութային կենտրոններ:

Արտաքին լուսավորություն

Երևան քաղաքի արտաքին լուսավորությունը «մեծ» կենտրոնի տարածքում և բոլոր կամուրջները ապահովվում են 12 ժամ միջին օրական միացման ռեժիմով, մյուս վարչական շրջանների տարածքը՝ 8 ժամ միջին օրական միացման ռեժիմով, բոլոր թունելները և անցումները՝ շուրջօրյա ռեժիմով, իսկ Մաշտոցի և Իսակովի պողոտաների արտաքին լուսավորությունն ապահովվում է մինչև լուսաբաց: Շահագործվում և պահպանվում է 1024 օբյեկտների (փողոցներ, այգիներ, արձաններ և այլն) 1196 կմ ընդհանուր երկարությամբ արտաքին լուսավորության ցանցը: 49765 հատ տարբեր տիպի լուսատուներ մոնտաժված են 27170 արտաքին լուսավորության հենասյուների վրա:

«Երքաղլույս» ՓԲԸ-ն 2011թ. իրականացրել է թվով 24 օբյեկտների (փողոցներ, բակեր, այգիներ, արձաններ, շենքեր, կամուրջներ) արտաքին լուսավորության աշխատանքները: «Երևան» հիմնադրամի հետ կնքված պայմանագրով (15,53 մլն դրամ) իրականացրել է Ալ. Սպենդիրարյանի անվան պետական օպերայի և բալետի ակադեմիական թատրոնի և Ա. Խաչատուրյանի անվան մեծ համերգասարահի շենքի լուսավորման աշխատանքները:

ՀՀ Անկախության 20-ամյակին նվիրված միջոցառումների շրջանակում իրականացվել է տարբեր կապալառուների կողմից կատարված Երևանի հեռուստաաշտարակի, Մատենադարանի շենքի, Հաղթանակ և Կինյան կամուրջների, Հովհ.Թումանյանի տուն-թանգարանի շենքի, Մարշալ Բաբաջանյանի արձանի, Մեծ Եղեռնի զոհերի հիշատակին նվիրված հուշարձանի, Մայր Հայաստան հուշարձանի, Միքայել Նալբանդյանի, Մեսրոպ Մաշտոց և Սահակ Պարթև, Վահագն Վիշապաքաղ արձանների արտաքին լուսավորության աշխատանքները:

Երևան քաղաքի հուշարձանների, կամուրջների, ճարտարապետական արժեք ներկայացնող շենք-շինությունների գեղարվեստական լուսավորման աշխատանքների ֆինանսավորմանը մասնակցություն են ցուցաբերել հովանավոր կազմակերպությունները:

Մ. Սարյանի տուն թանգարանի շենքի, Խ. Աբովյանի անվան պուրակի, Մարշալ Բաղրամյանի արձանի, Հրազդանի կիրճի, հ. 77 դպրոցին կից մարզադպրոցի դահլիճի, Թբիլիսյան խճուղու նրբանցքի, Քանաքեռի 10-րդ փողոցից մինչև Քանաքեռի 8–րդ փողոցը ընկած հատվածի արտաքին լուսավորվածության աշխատանքների ընդհանուր աժեքը կազմել է 14.1 մլն դրամ:

Տրանսպորտ

Երևան քաղաքում ավտոբուսներով իրականացվող ուղևորափոխադրումների տեսակարար կշիռը ներքաղաքային ուղևորափոխադրումների ընդհանուր ծավալում դեռևս մնում է ցածր՝ կազմելով մոտ 15,0%, իսկ միկրոավտոբուսներին բաժին է ընկնում ուղևորափոխադրումների 73,0%-ը: Դեռևս ցածր է տրոլեյբուսներով տեղափոխվող ուղևորների տեսակարար կշիռը. ներքաղաքային ընդհանուր ուղևորափոխադրումներում կազմելով մոտ 2.3%:

Ոչ արդյունավետ հասարակական տրանսպորտի գործող երթուղային ցանցը և կառավարման համակարգը չեն խթանում առկա տրանսպորտային միջոցների, հատկապես մետրոյի և տրոլեյբուսի արդյունավետ օգտագործումը, որն իր հերթին պատճառ է դառնում այդ ոլորտների պահպանման և շահագործման համար ավելի մեծ ծավալի պետական ներդրումների:

Հասարակական տրանսպորտի գործող համակարգը գրավիչ չէ նաև ոլորտում կատարվող ներդրումների համար:

Ուղևորափոխադրումներն ըստ տրանսպորտային միջոցների



Ավտոբուսային փոխադրումներ

Երևան քաղաքում փաստացի գործում են թվով 29 ավտոբուսային երթուղիներ, որոնցում օրական միջին հաշվով շահագործվում է 240-250 միավոր շարժակազմ: Ավտոբուսային երթուղիները պայմանագրային հիմունքներով սպասարկվում են թվով 14 մասնավոր կազմակերպությունների և «Ավտոբուս» ՓԲԸ-ի կողմից:

Միկրոավտոբուսային փոխադրումներ

Երևան քաղաքում գործում են թվով 110 միկրոավտոբուսային երթուղիներ, որոնք համալրված են տարբեր մակնիշների մոտ 2600 միավոր շարժակազմով: Նշված երթուղիները պայմանագրային հիմունքներով սպասարկում են երթուղիների սպասարկման իրավունքի հատկացման համար անցկացված մրցույթներում հաղթող ճանաչված թվով 61 մասնավոր կազմակերպություններ:

Վերգետնյա էլեկտրատրանսպորտ

«Երևանի էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ-ի հաշվեկշռում առկա է թվով 79 տրոլեյբուս (1-ը՝ տեխօգնության): Ընկերության կողմից ներկայումս սպասարկվում են թվով 5 տրոլեյբուսային երթուղիներ:

Երևանի վերգետնյա էլեկտրատրանսպորտի գործունեության վերջին մի քանի տարիների վերլուծությունը ցույց է տվել, որ որոշակիորեն ավելացել է տրոլեյբուսներով տեղափոխվող ուղևորների քանակը: Մասնավորապես, այն շարունակվել է նաև ընթացիկ տարում. 2011թ. 9 ամիսների ընթացքում 2010թ. նույն ժամանակահատվածի համեմատ ուղևորափոխադրումների ծավալն աճել է մոտ 9,5%-ով:

Մետրոպոլիտեն

Երևանի մետրոպոլիտենում առկա է թվով 70 վագոն: Աշխատանքային օրերին գիծ է դուրս բերվում 26 վագոն (13 շարժակազմ), իսկ շաբաթ և կիրակի օրերին՝ 24 վագոն (12 շարժակազմ):

Վերջին տարիներին մետրոպոլիտենով իրականացվող ուղևորափոխադրումներում նկատվում է կայունացման և աճի միտում: Չնայած այդ հանգամանքին՝ մետրոպոլիտենը մնում է ծանր ֆինանսական վիճակում և այսօր դեռևս հնարավորություն չկա ամբողջ ծավալով և պատշաճ մակարդակով իրականացնելու մետրոպոլիտենի շահագործման և երթևեկության անվտանգության ապահովման նախատեսված աշխատանքները:

Գործող երթուղային ցանցում հաշվի չի առնված մետրոյի գոյությունը, և այն ամենևին ինտեգրված չէ վերգետնյա ուղևորատրանսպորտային համակարգի հետ: Այդ պատճառով այն գտնվում է անհավասար մրցակցության մեջ: Մի կողմից Երևան քաղաքի հնարավորությունները սուղ են տրանսպորտային համակարգում կատարվող ներդրումների համար, մյուս կողմից ոչ լիովին են օգտագործվում մետրոյի առկա հնարավորությունները: Սա էական ազդեցություն է թողնում մետրոյի եկամուտների վրա:

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի ֆինանսավորմամբ իրականացվում է ծրագիր, որը նպատակ է հետապնդում բարելավելու Երևանի մետրոպոլիտենի ծառայությունների անվտանգ և ապահով իրագործումը: Ծրագիրը բաղկացած է հետևյալ ներդրումային բաղադրիչներից՝ շարժակազմի արդիականացում, ռելսային գծերի վերականգնում, էլեկտրասնուցման վերականգնում և վերանորոգում, սպասարկման ծառայությունների և ենթակառուցվածքների արդիականացում, ջրի ներհոսքի վերացում: Ծրագրի ընդհանուր ներդրումային արժեքը կազմում է 15.0 մլն եվրո:

Հասարակական տրանսպորտի կանգառներ

Երևանի ներքաղաքային հասարակական տրանսպորտի կանգառների կանոնակարգման նպատակով 2011թ. շուրջ 310 կանգառներում ռետինե արհեստական անհարթությունների (բարձակների) կիրառմամբ և համապատասխան գծանշմամբ առանձնացվել են կանգառագոտիները, վերանորոգվել են կանգառանշանները, բարելավվել դրանց արտաքին տեսքը:

Երթուղային ցանց

2011թ. շարունակվել են հասարակական տրանսպորտի երթուղային ցանցի լրամշակման աշխատանքները՝ նպատակ հետապնդելով ամբողջովին վերանայելու Երևան քաղաքում ուղևորափոխադրումների կազմակերպման գործընթացը, որոշակիորեն նվազեցնելու միկրոավտոբուսների քանակը, մեծացնելու մետրոպոլիտենի և տրոլեյբուսների դերը ներքաղաքային ուղևորափոխադրումներում, բեռնաթափելու քաղաքի կենտրոնական և մագիստրալային փողոցները, ինչպես նաև նախատեսելու ավտոբուսային նոր, արդյունավետ երթուղիներ, որոնց սպասարկումն իրականացվելու է մայրաքաղաք ներկրվելիք փոքր և միջին տեղատարողության ավտոբուսներով:

Հաշմանդամների տրանսպորտային սպասարկում

Երևանի քաղաքապետարանի «Ավտոբուս» ՓԲԸ-ին պատկանող «Ռենո–SC10» մակնիշի մեծ տեղատարության թվով 2 ավտոբուսների վրա կատարվել են կառուցվածքային փոփոխություններ, որի արդյունքում դրանք հարմարեցվել են հաշմանդամների բարձրանալիջնելուն: Այդ ավտոբուսների առավել արդյունավետ և նպատակային շահագործումն իրականացնելու համար Երևանի քաղաքապետի համապատասխան որոշումներով դրանք հանձնվել են Հայաստանի հաշմանդամների «Փյունիկ» միությանը և «Ունիսոն» հասարակական կազմակերպությանը:

Բացի այդ, «Լիազ» մակնիշի տրոլեյբուսներից 2-ը, որոնք ներկայումս շահագործվում են ներքաղաքային երթուղիներում, իրենց կառուցվածքով հարմարեցված են հաշմանդամների տրանսպորտային սպասարկումն իրականացնելու համար:

Երթակարգավարական կետեր

Երևան քաղաքում առկա են թվով 38 երթակարգավարական կետեր, որոնց միջոցով կարգավորվում է ներքաղաքային ավտոբուսային, միկրոավտոբուսային և տրոլեյբուսային երթուղիների աշխատանքը:

Կատարվել են մայրաքաղաքում առկա տրանսպորտային միջոցների կայանատեղիների գույքագրման աշխատանքներ և փողոցների առանձին հատվածներում ավտոկայանատեղիների շահագործման համար կնքվել են ժամանակավոր պայմանագրեր:

Մայրաքաղաքի կենտրոնական փողոցներում, հասարակական տրանսպորտի առավել ծանրաբեռնված կանգառներում տեղադրվել են շուրջ 60 տեսախցիկներ՝ հասարակական տրանսպորտի աշխատանքը վերահսկելու համար:

ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության, ՀՀ ճանապարհային ոստիկանության հետ համատեղ շարունակվել են աշխատանքները Երևան քաղաքի վարչական տարածք միջմարզային երթուղիների մուտքը սահմանափակելու, ուղեգծերը և վերջնակետերը վերանայելու, ինչպես նաև դրանց աշխատանքը կանոնակարգելու ուղղությամբ:

Արդյունքում մայրաքաղաքի կենտրոնում գործող միջմարզային երթուղիների երթա-կարգավարական կետերը (կ/թ «Այրարատ», Աբովյան պուրակ, Պարոնյան, Սարյան փողոցներ) հանվել և տեղափոխվել են, վերանայվել և մասնակիորեն փոփոխվել են մայրաքաղաքի կենտրոնով շահագործվող միջմարզային երթուղիների ուղեգծերը:

Կոմունալ ոլորտ

Ջրամատակարարում և ջրահեռացում

Երևան քաղաքի ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունները մատուցվում են «Վեոլիա-Օ կոմպանի Դեզ Օ» ֆրանսիական ընկերության կողմից 2005թ. դեկտեմբերին հիմնադրված «Երևան Ջուր» ՓԲԸ-ի կողմից:

Մայրաքաղաքում ջուրը սպառողին բաշխվում է 1320 կմ երկարություն ունեցող բաշխիչ ցանցի և 245 հազ. խմ տարողությամբ սանիտարական գոտիներում տեղակայված օրվա կարգավորող 23 ջրավազանների (ՕԿՋ) միջոցով:

Երևան քաղաքի ջրամատակարարման համակարգն ունի 103 կապտաժային կառույցներ, 39 արտեզյան հորատանցքեր, 5 խոշոր պոմպակայաններ, 30 խորքային հորատանցքեր և 803 կմ մայրուղային ջրատարներ: Երևան քաղաք մտնող ջրաքանակի շուրջ 69%-ը մատակարարվում է մեխանիկական եղանակով:

Համաշխարհային Բանկի վարկային միջոցների հաշվին «Երևան Ջուր» ՓԲԸ-ի կողմից Երևան քաղաքում շարունակվում է 22.0 մլն ԱՄՆ դոլարի ջրամատակարարման և ջրահեռացման 2-րդ վարկային ծրագիրը: Ծրագրի սկզբից (15.09.2006թ.) իրականացվել է 12.1 մլն ԱՄՆ դոլարի շինարարական աշխատանքներ, որից 2.1 մլն ԱՄՆ դոլարը՝ 2011 թվականի 9 ամիսների ընթացքում:

Պայմանագրային 5-րդ տարում՝

- օրվա ընթացքում ջրամատակարարման ժամերի միջին տևողությունն ավելացել է 8.5 %-ով, կազմելով՝ 21,26 ժամ,
- ջրարտադրությունը նվազել է 6.1%-ով, ընդ որում՝ մեխանիկական եղանակով՝ 33.3 %-ով,
- ջրի ընդհանուր կորուստը (արտադրված և սպառված ջրաքանակների տարբերությունը) նվազել է 7.2 %-ով,
- էլեկտրաէներգիայի սպառումը նվազել է 38.7 %-ով,
- ջրային ավազաններ կեղտաջրերի արտանետման տեղերի թիվը կրճատվել է 59 %-ով,
- ջրաչափ ունեցող բնակիչ բաժանորդների թիվն ավելացել է 8 %-ով:

Բազմաբնակարան շենքերի կառավարում

2011թ. Երևանում հաշվառված 4731 բազմաբնակարան շենք: Թվով 4591 բազմաբնակարան շենքերի կառավարումն իրականացվում է 286 համատիրությունների կողմից, 104-ը՝ լիազորագրային կառավարիչների, 16-ը՝ վարչական շրջանների ղեկավարների և 9-ը՝ ԿԷՀ-ի կողմից:

Բազմաբնակարան շենքերի տեխնիկական վիճակը գնահատվում է անբավարար:

Վերելակային տնտեսություն

Երևան քաղաքի բարձրահարկ շենքերում վերելակների թիվը 4294 է, որից աշխատող՝ 4121: Ավան վարչական շրջանում հաշվառված է 330 վերելակ, Արաբկիրում՝ 460, Աջափնյակում՝ 302, Դավթաշենում՝ 385, Էրեբունիում՝ 211, Կենտրոնում՝ 580, Մալաթիա-Սեբաստիայում՝ 958, Նոր Նորքում՝ 589, Շենգավիթում՝ 216, Քանաքեռ-Զեյթունում՝ 257, Նուբարաշենում՝ 6:

Աղբահանություն և սանիտարական մաքրում

2011թ. Երևան քաղաքի սանիտարական մաքրման ենթակա փողոցների, հրապարակների, կամուրջների, մայթերի, բակային տարածքների և այլ կառույցների ընդհանուր մակերեսը կազմել է շուրջ 12.931.2 հազ. քմ:

Մայրաքաղաքի աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքներն իրականացվում է թվով 12 մասնագիտացված ընկերությունների շուրջ 1600 աշխատակիցների և շուրջ 408 միավոր հատուկ նշանակության մեքենա-մեխանիզմների միջոցով:

Մայրաքաղաքի բազմահարկ-բազմաբնակարան շենքերում առկա է՝ թվով 3901 հատ աղբամուղ:

2011թ. ձեռք է բերվել հատուկ նշանակության թվով 27 մեքենա-մեխանիզմներ: Մայրաքաղաքի մաքրությունը պատշաճ մակարդակով ապահովելու համար ձեռք է բերվել թվով 4000 հատ 60 լիտրանոց աղբամաններ և տեղադրվել քաղաքի համապատասխան վայրերում:

Երևանում աղբահանության և սանիտարական մաքրման (ներառյալ ձմռան ամիսներին) ծառայությունների մրցույթի նախապատրաստական աշխատանքների շրջանակում ստեղծվել է աղբահանության գումարների հավաքագրման միասնական շտեմարան, իրականացվել տեղեկատվության ամփոփում և տրամադրում, արտասահմանյան օպերատորների հետ կնքվող պայմանագրերի պայմանների քննարկում, վերջիններիս առաջարկությունների վերլուծություն:

Բնակչությունից հավաքագրված աղբահանության գումարների դինամիկա, հունվար- հոկտեմբեր, 2011թ., հազ. դրամ



Կազմակերպություններից հավաքագրված աղբահանության գումարների դինամիկա, ըստ ամիսների հունվար- հոկտեմբեր 2011թ., հազ. դրամ



Աղբահանության աշխատանքները վերահսկելու նպատակով հատուկ նշանակության մեքենա-մեխանիզմների վրա շարունակվում են տեղադրել GPS համակարգեր:

Գույքագրվել և էլեկտրոնային տարբերակի են վերածվել նաև քաղաքի բազմաբնակարան շենքերում առկա աղբամուղերի, ինչպես նաև կոնտեյներների և աղբամանների տեղակայման վայրերը, հասցեները, քանակներն ու տեսակները:

23.06.2011թ. ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունվեց «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքը, համաձայն որի աղբահանության վարձավճարը դարձել է պարտադիր գանձույթ: Օրենքն ամբողջությամբ կգործի՝ իրավական ակտերը Երևանի ավագանու կողմից հաստատելուց հետո (2012թ. հունվարի 1-ից):

Նուբարաշենի աղբավայր

Երևան քաղաքը Հայաստանում սպառման կոշտ թափոնների առաջացման խոշորագույն օջախ է, որտեղ կուտակվում է երկրի ընդհանուր կոշտ թափոնների շուրջ 70-75 %–ը:

Մայրաքաղաքի տարածքից քաղաքային աղբավայր է տեղափոխվում օրական միջին հաշվով 800-1000 տոննա կամ տարեկան 292-365 հազար տոննա կենցաղային աղբ:

2011թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ Նուբարաշենի աղբավայրում արդեն տեղադրվել, վնասազերծվել և հողի շերտով ծածկվել է շուրջ 243 հազ. տոննա կենցաղային աղբ:

Նուբարաշենի աղբավայրի տարածքը պատկանում է Երևանի քաղաքապետարանին, իսկ աղբի ընդունումը, տեղադրումը և վնասազերծումը, Երևանի քաղաքապետի 2004թ. հուլիսի 9-ի որոշման համաձայն, իրականացնում է «Էրեբունի մաքրություն» ՍՊ ընկերությունը: Աղբավայրը չունի ցանկապատ, հագեցած չէ ժամանակակից հարթեցնող և գլդոնող տեխնիկայով, որի պատճառով հաճախակի աղբավայրի տարածքում տեղի է ունենում կենցաղային աղբի ինքնաբռնկում:

Քաղաքային աղբավայրում ջերմային գազերի արտանետումը կրճատելու նպատակով 2009թ. մարտի 10-ին Երևանի քաղաքապետարանը ճապոնական «Շիմիձու» կորպորացիայի հետ կնքեց համաձայնագիր Նուբարաշենի թափոնակուտակիչում կենսագազի հավաքման և այրման ծրագրի վերաբերյալ: Ծրագրի տևողությունը 16 տարի է: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է մոտ 8.0 մլն ԱՄՆ դոլար: Համակարգի պահպանման և շահագործման ծախսերը կկազմեն մոտ 5,5 մլն ԱՄՆ դոլար, որը կիրականացնի ճապոնական կողմը:

Ներկա պահին արդեն ներդրվել է 2.75 մլն ԱՄՆ դոլար: Կառույցը հանձնվել է հայկական կողմին՝ որպես սեփականություն: Շահագործումն իրականացնում է «Նոր բարեկարգում» ՓԲ ընկերությունը:

Առևտուր և սպասարկում

Երևան քաղաքում գործում են առևտրի 8829 օբյեկտներ, սպառողական ապրանքների՝ 22, գյուղատնտեսական արտադրանքի՝ 29 շուկաներ, հանրային սննդի՝ 1101 և կենցաղային ծառայություններ մատուցող՝ 1704 օբյեկտներ:

Առևտրի օբյեկտների 81.5%-ը, հանրային սննդի օբյեկտների 84.3%-ը և կենցաղային ծառայություններ մատուցող օբյեկտների 86.2%-ը կենտրոնացված են Կենտրոն, Արաբկիր, Էրեբունի, Մալաթիա–Սեբաստիա, Նոր Նորք և Շենգավիթ վարչական շրջաններում:

Երևանի մանրածախ առևտրի օբյեկտների քանակը

		2007	2008	2009	2010
1.	Մանրածախ առևտրի օբյեկտների քանակը, միավոր	9357	10498	11937	11210
1.1	Խանութներ	6445	7589	9118	8772
1.2	Սպառողական ապրանքների շուկաներ	21	19	18	26
1.3	Գյուղարտադրանքի շուկաներ	11	11	11	11
1.4	Կրպակներ	2749	2743	2643	2273
1.5	Առևտրի այլ օբյեկտներ	131	136	147	128

Երևանում առևտրի շրջանառության ծավալի մոտ 86%–ը բաժին է ընկնում Կենտրոն, Մալաթիա-Սեբաստիա, Արաբկիր, Էրեբունի և Շենգավիթ վարչական շրջաններին, չնայած նշված վարչական շրջաններում ապրում է քաղաքի բնակչության ընդամենը 60%-ը: Դա բացատրվում է այդ վարչական շրջաններում առևտրի խոշոր կազմակերպությունների առկայությամբ: Մնացած 7 վարչական շրջանների տարածքներում իրականացվող առևտրի շրջանառությունը առանձին–առանձին վերցրած կազմում է 0.06%-ից մինչև 3.7%:

Բացօթյա առևտրի արգելման ծավալուն աշխատանքներ են իրականացվել Երևան քաղաքի բոլոր փողոցներում ու պողոտաներում: Ձեռնարկված միջոցառումների շնորհիվ Երևան քաղաքի բոլոր փողոցների և պողոտաների մայթերը մաքրվել ու ազատվել են «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքով բացօթյա առևտրի համար չթույլատրվող ապրանքներից, սահմանվել է մշտական հսկողություն բացօթյա ապօրինի առևտրի վերսկսումը բացառելու նպատակով:

Բացօթյա առևտրով զբաղվող անձանց համար նոր աշխատեղեր ստեղծելու նպատակով մասնավոր ներդրումների հաշվին Երևանի քաղաքի Արաբկիր վարչական շրջանում կառուցվել են 4, Նոր Նորք վարչական շրջանում՝ 2, Շենգավիթ և Աջափնյակ վարչական շրջաններում՝ 1–ական գյուղատնտեսական փոքրածավալ շուկաներ, որոնք արդեն գործում են:

Ավարտական փուլում են գտնվում Շենգավիթ վարչական շրջանում նույնատիպ շուկայի կառուցման աշխատանքները, իսկ Մալաթիա–Սեբաստիա, Շենգավիթ և Աջափնյակ վարչական շրջաններում 1–ական փոքրածավալ շուկաներ կազմակերպելու նպատակով հատկացվել են հողատարածքներ:

Երևան քաղաքի առևտրի և սպասարկման ոլորտի տասը կազմակերպությունների երկու տարի ժամկետով շնորհել է «Որակի բարձրագույն աստիճան» և «Որակի առաջին աստիճան»:

Բնապահպանություն

Երևան քաղաքի հողերը և մթնոլորտը աղտոտված են տարբեր վնասակար նյութերով: Երևանի բոլոր շրջանների հողերը հատում են աղտոտման բարձր մակարդակի շեմը (ԱԳԳ=32-128):

- Մայրաքաղաքի մեկ բնակչին հասնող ընդհանուր օգտագործման կանաչ տարածքի չափանիշը 7.5 մ²/մարդ, որը 2-2,2 անգամ պակաս է նորմատիվայինից:

2011թ. ծրագրի շրջանակներում իրականացվել և ընթացքի մեջ են մի շարք կարևորագույն աշխատանքներ:

- Ստեղծվել են 3.2 հա մակերեսով Արգավանդի ուղետար կամրջի և 1.9 հա մակերեսով Բաբաջանյան փողոցի նոր սիզամարգերը, որոնք նոր կանաչ տարածքների հետ միասին գեղագիտական տեսք են հաղորդում մայրաքաղաքի մուտքին:
- Ջերմատան տնտեսությունում աճեցվել է մոտ 500.000 հատ բարձրորակ ծաղկասածիլ, որոնցով համալրվել են Երևան քաղաքի ծաղկային տարածքները՝ հասցնելով այն մինչև 5.5 հա:
- Երկու փուլով ընթանում են ոռոգման ցանցի անցկացման աշխատանքներ՝

1-ին փուլով ավարտված են Շերամ-Բաբաջանյան, Սարալանջ, Էրեբունի աջ կողմ, Իսակով, Երևան-Սևան խճուղու փողոցների և պողոտաների նոր ոռոգման ցանցերի ստեղծման աշխատանքները:

2-րդ փուլի շրջանակում իրականացվում են Էրեբունի փողոցի ձախակողմյան հատվածի, Ավան թաղամասերի նոր ոռոգման ցանցերի ստեղծման աշխատանքներ:

Ձեռք է բերվել 1000 միավոր նորագույն տեխնիկա (մեքենա - մեխանիզմներ), որը հնարավորություն կտա 12 վարչական շրջանների կանաչապատման տեղամասերին, ինչպես նաև ՆՈՒՀ-երին, համատիրություններին և դպրոցներին կազմակերպելու և իրագործելու ժամանակակից պահանջներին համապատասխան աշխատանքներ:

- Ծաղկապատվել են թվով 3 կամուրջներ:
- Իրականացվել է ծառատունկ, որը կնպաստի ոչ միայն կանաչ տարածքների ավելացման, այլ և տնկվող տեսականին օժտված լինելով գազա և փոշեկլանիչ հատկություններով՝ կմեղմացնի մայրաքաղաքի էկոֆոնը:

Եկամուտների հաշվառում և գանձում

Կարևորելով Երևան քաղաքի բյուջեի եկամուտների հավաքագրման գործընթացը էլ ավելի համակարգված դարձնելու հրամայականը՝ ստեղծվել է գույքային հարկերի տվյալների միասնական բազա:

2011 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ Երևանի քաղաքապետարանի և 12 վարչական շրջանների կողմից հավաքագրված սեփական եկամուտները կազմել են 11.224.599,3 հազ. դրամ, որից 9.762.556,3 հազ. դրամը հավաքագրվել է վարչական շրջանների կողմից, իսկ 1.462.043,0 հազ. դրամը՝ Երևանի քաղաքապետարանի:

Սեփական եկամուտները, հունվար-նոյեմբեր, 2011թ.



Վարչական շրջաններում հավաքագրված սեփական եկամուտների 74.0%-ը (7.272.451,8 հազ. դրամ) կազմում են հարկային եկամուտները, 18.0%-ը (1.712.847,0 հազ. դրամ)՝ տեղական տուրքերը և 8.0%-ը (777.257,5 հազ. դրամ)՝ այլ եկամուտներ:

Վարչական շրջանների կողմից հավաքագրված սեփական եկամուտների կառուցվածքը, 2011թ., հունվար-նոյեմբեր



Անշարժ գույքի կառավարում

Երևան քաղաքի վարչական տարածքը 22328 հեկտար է, այդ թվում՝ բնակավայրերի հողեր 11815.4 հա, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության 2939.7 հա, էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների 883.5 հա և այլն: Համայնքային սեփականություն հանդիսացող հողը կազմում է 11055.8 հա, պետականը՝ 3359.5 հա քաղաքացիներինը 5291.1հա:

Երևան քաղաքում հաշվառված է բազմաբնակարան 4731 շենքեր, որոնցից 4-րդ աստճանի վթարայնության և քանդման ենթակա են 10 շենքեր, դրանցում առկա են 498 բնակարաններ (այդ թվում՝ հանրակացարանային տարածքներ), որոնցից 262-ը՝ Աջափնյակ, 1504-ը՝ Էրեբունի, 52-ը՝ Շենգավիթ, 27-ը՝ Կենտրոն և 7-ը՝ Արաբկիր վարչական շրջաններում: Երևան քաղաքում հաշվառված են 80 երրորդ աստիճանի վնասվածության շենքեր:

ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի հ.2387-Ն որոշման պահանջներին չհամապատասխանող, պետական գրանցում ունեցող հաշվառված, շինությունները հասցեավորվում են:

2011թ. Երևանի քաղաքապետի որոշումներով քաղաքացիներին անհատույց սեփականության իրավունքով փոխանցվել են թվով 316 բնակարաններ:

Ներդրումային ոլորտ

Ներկայումս Երևանի քաղաքապետարանն իրականացնում է աշխատանքներ՝ ուղղված մայրաքաղաքում ներդրումային դաշտի բարելավմանը: Մշակվել են պոտենցիալ ներդրողներին ցուցաբերվող օժանդակության հնարավոր ուղղությունները: Երևանի քաղաքապետարանը աջակցում է հետևյալ գործընթացներին.

- ներդրողի համար ընդունելի և ներդրումային ծրագրերի իրականացման համար համապատասխան հողատարածքների վերաբերյալ առաջարկների տրամադրում,
- աջակցություն ներդրողին՝ հողատարածքների իրավական կարգավիճակի մասին լիարժեք և սպառիչ տեղեկատվություն ստանալու համար,
- աջակցություն ներդրողին՝ ներդրումային ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթերի (տեխնիկական առաջադրանք, անհրաժեշտ թույլտվություններ և այլն) ձեռք բերման գործում,
- հողատարածքների օգտագործման վարձավճարների արտոնյալ կարգի հաստատման հնարավորությունների ու պայմանների դիտարկում:

2011թ. ընթացքում տարվել են բանակցություններ և կնքվել համագործակցության համաձայնագրեր մի շարք խոշոր տեղական և օտարերկրյա ընկերությունների հետ, մասնավորապես՝ «Տաշիր» ընկերությունների խմբի, «Իտերա» միջազգային ընկերությունների խմբի, «Սվարկո», «Տեոտեք», «Իսկուհի» և այլ ընկերությունների միջև՝ ուղղված քաղաքային ենթակառուցվածքների զարգացմանը և խոշոր ներդրումային ծրագրերի իրագործմանը:

«Գարրի Գոդդարդ» ընկերության հետ համատեղ մշակվել է Հաղթանակ զբոսայգու վերակառուցման և արդիականացման ծրագիրը

Մշակվել են մի շարք խոշոր ներդրումային առաջարկներ («Նոյլենդ», «Արտսիթի» և այլն), որոնք տեղակայվել են Երևանի պաշտոնական կայքէջում և շնորհանդեսի տեսքով ներկայացվել օտարերկրյա ներդրողներին:

Արտաքին ձևավորում և գովազդ

Արտաքին գովազդի ոլորտը Երևան քաղաքում կարգավորվում է «Գովազդի մասին», «Տեղական տուրքերի վճարների մասին», «Բազմաբնակարան շենքերի կառավարման մասին» ՀՀ օրենքներով, Երևանի ավագանու 2009թ. նոյեմբերի 18–ի հ.37-Ն որոշմամբ և այլ իրավական ակտերով: «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 55–րդ հոդվածի համաձայն Երևանի ավագանու կողմից սահմանվել է քարտեզի տեսքով Երևան քաղաքի գովազդային գոտին:

Երևան քաղաքի վարչական սահմաններում գովազդը տեղաբաշխվում է վահանակների, լուսատախտակների, պլակատների, ազդագրերի, հայտարարությունների, էլեկտրոնային էկրանների, շենքերի մուտքերի և պատուհանների հովհարների (մարկիզներ), այլ նյութական կրիչների և տեխնիկական միջոցների ձևով: Երևան քաղաքում 2011թ. նոյեմբերի 1–ի դրությամբ տեղադրված են 1037 փոքր, մեծ և միջին չափերի գովազդային վահանակներ և շուրջ 500 վահանակներ՝ էլեկտրասյուների վրա, որոնց զգալի մասը գտնվում է Կենտրոն վարչական շրջանի տարածքում:

Մայրաքաղաքի գեղագիտական կերպարի բարելավման ուղղությամբ «Ժպտա Երևան» ծրագրի նախաձեռնող խմբի կողմից ներկայացված և համաձայնեցված նախագծով կատարվել են Կենտրոն վարչական շրջանի թվով 3 շենքերի ճակատների կերամիկական սալիկներով մոզայիկ պատկերների տեղադրման աշխատանքներ՝

- Սարյան փողոց հ.29/36 (կողային ճակատ՝ Մարտիրոս Սարյանի նկարով)
- Ռոմանոս Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանի՝ Ամիրյան պող. նայող և կողային ճակատներ
- Տպագիչների և Հանրապետության փողոցների հատման մասում հ.67 բնակելի շենքի ճակատ

Շենքերի կամարանցումները ձևավորվել են տարբեր նկարազարդումներով:

Քաղաքի հիմնական պողոտաներից ապամոնտաժվել են գովազդային վահանակներ՝

- Մ.Մաշտոցի պողոտա
- Սայաթ-Նովա պողոտա (ֆրանսիայի հրապապարակ-Տերյան)
- Բաղրամյան պողոտա (Ֆրանսիայի հրապապարակ-Իսահակյան)

Կրթություն

Դպրոցական բաժին

Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործում են թվով 169 կրթական հաստատություններ՝ 163 հանրակրթական և 2 հատուկ դպրոցներ, 4 արհեստագործական ուսումնարաններ և 161 նախադպրոցական ուսումնական հաստատություններ:

Երևանում գործում են թվով 46 ոչ պետական լիցենզավորված ուսումնական հաստատություններ:

Երևանի քաղաքապետարանի դպրոցներն ապահովված են համակարգչային տեխնիկայով և ինտերնետային կապով, համակարգիչների թիվը մեկ դպրոցի հաշվով միջինում 2011թ. կազմում է 14 միավոր: Դպրոցներում առկա են էլեկտրոնային գրադարաններ՝ 19 էլեկտրոնային ձեռնարկներով, ինչպես նաև էլեկտրոնային գրատախտակներ:

Նախադպրոցական ուսումնական հաստատություններ

Երևանի քաղաքապետարանի ենթակայության գործում են 161 համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատություններ, երեխաների ցուցակային թիվը կազմում է 28538 երեխա, մանկավարժական անձնակազմը՝ 1666 մարդ:

Գործում են 53 ոչ պետական նախադպրոցական ուսումնական հաստատություններ:

Նախնական մասնագիտական արհեստագործական ուսումնարաններ

Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործում են թվով 4 նախնական մասնագիտական արհեստագործական ուսումնարաններ՝ սպասարկման, զարդակիրառական և երկաթուղային ոլորտի մասնագիտություններով:

2011թ. Երևանի քաղաքապետարանը նախաձեռնել էր «Օգնի՛ր դպրոցիդ» և «Օգնի՛ր մանկապարտեզիդ» (http://www.ognirdprocid.am և http://www.ognirmankapartezid.am) կայքէջերի ստեղծումը, որը հնարավոր աջակցության աղբյուր է դպրոցական շենքերի նորոգման, ժամանակակից պահանջներին համապատասխան գույքով և նորագույն տեխնոլոգիաներով վերազինման ծրագիր իրականացնելու նպատակով: «Օգնի՛ր դպրոցիդ» կայքէջում մուտքագրված գումարի չափը կազմում է 631.671.462,0 դրամ:

«Ֆյունիկ» բարեգործական հիմնադրամը բարեկարգել է մի շարք կրթական հաստատությունների բակեր և ձևավորել խաղահրապարակներ, դպրոցներն ապահովել բնագիտական լաբորատորիաներով:

Ըստ Երևան քաղաքի հանրակրթության զարգացման ծրագրի՝ կազմակերպվել է դպրոցների կայքէջերի ստեղծման և էլեկտրոնային հասցեի ապահովման գործընթաց:

Իրականացվել է «Դպրոցի կառավարման տեղեկատվական համակարգի» ներդրում՝ համաձայն ՀՀ ԿԳ նախարարի, Երևանի քաղաքապետի և ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի միջև կնքված փոխըմբռնման հուշագրի: Ներդրված համակարգի շնորհիվ հնարավոր կդառնա վերահսկել դպրոց, աշակերտ-ուսուցիչ-ծնող կապը, իսկ դպրոցի կառավարումը կդառնա առավել թափանցիկ:

Դպրոցի դասացուցակ է ընդգրկվել «Շախմատ» առարկան: Ստեղծվել են շախմատի առանձին կաբինետներ՝ համապատասխան գույքով:

Երևանի քաղաքապետի 2011թ. մարտի 31-ի հ.1101-Ա որոշմամբ 2011թ. ապրիլի 1-ից Երևան քաղաքի ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատություններում երեխայի նախադպրոցական կրթությունն իրականացվում է անվճար:

«Օգնի՛ր մանկապարտեզիդ» կայքէջում կարճատև ժամանակահատվածում կամավոր բարեգործությամբ ավելի քան 2000 մարդկանց և կազմակերպությունների կողմից մուտքագրվել է 375.569.378 դրամ, որի մեծ մասը ծախսվել է վերանորոգման, գույքի ձեռքբերման նպատակով:

«Հայաստան» համահայկական հիմնադրամի միջոցներով հիմնանորոգվել է հ.141 հատուկ մանկապարտեզը, բարեկարգվել բակը, ստեղծվել ժամանակակից խաղահրապարակներ և հիմնովին փոխվել գույքը:

Ջեռուցում չունեցող մանկապարտեզների ջեռուցման համակարգերը հանձնվել են շահագործման:

«Առդա» բարեգործական հիմնադրամի կողից իրականացվել է մի շարք նուհերի վերանորոգում, գրենական պիտույքների հատկացում և այլն:

Դպրոց-մշակութային օջախներ-քաղաքապետարան եռակողմ կապի ամրապնդման նպատակով մայրաքաղաքի դպրոցականների համար կազմակերպվել են անվճար այցելություններ թանգարաններ, պատկերասրահներ և թատրոններ, ներկայացումներ և դիտումներ: «Երևան» հիմնադրամի կողմից այս ծրագրի համար հատկացվել է շուրջ 50.0 մլն դրամ:

Առողջապահություն

Երևան քաղաքում բնակչության արտահիվանդանոցային և հիվանդանոցային բժշկական օգնությունն ու սպասարկումն իրականացվում է 98 առողջապահական կազմակերպությունների կողմից: Երևանի քաղաքապետարանի ենթակայության տակ գտնվում է թվով 24 առողջապահական հիմնարկ՝ 5 հիվանդանոց, 15 պոլիկլինիկա, 1 բուժսանմաս, 2 դիսպանսեր և շտապբուժօգնության ծառայություն:

Երևան քաղաքի բյուջեով «Առողջապահական հիմնարկների հիմնանորոգում» ծրագրի շրջանակներում իրականացվել է «Շտապբուժօգնություն» ՓԲԸ-ի 88.6 մլն դրամ շինարարական աշխատանքներ: Ընթացքի մեջ է «Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ի 1-ին մասնաշենքի կցակառույցի շինարարական աշխատանքները (55.9 մլն դրամ):

Առողջապահական ընկերությունների միջոցների և բարերարների հաշվին բուժհիմնարկները համալրվել են համապատասխան սարքավորումներով:

2011թ. իրականացվել է «Քանաքեռ-Զեյթուն» ԲԿ-ի ակնաբուժական կլինիկայի վերազինման ծրագիրը «ՎԻՎԱՍԵԼ-ՄՏՍ» ընկերության աջակցությամբ: Ձեռք են բերվել ժամանակակից ախտորոշիչ սարքավորումներ (52.0 մլն դրամ):

Շտապօգնության ծառայության ոլորտում արդիականացվել է շտապբուժօգնության մեքենաների ավտոմոբիլային պարկը, ծառայությունը հագեցվել է բուժսարքավորումներով, ներդրվել է GPRS կապի համակարգ, վերապատրաստվել ծառայության բուժանձնակազմը:

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առողջապահության վարչության կողմից մշակել և ներդրվել է բուժօգնության որակի, ֆինանսատնտեսական և ծրագրային ցուցանիշների Երևանի քաղաքապետարանի ենթակայության առողջապահական ընկերությունների գործունեության գնահատման կողմնորոշիչ ուղեցույց:

Սոցիալական ապահովություն

2011թ. 11 ամիսների ընթացքում Երևան քաղաքում փաստագրվել են 16162 ընտանիքներ, ընտանեկան նպաստներ և հրատապ դրամական օգնություն են ստացել շուրջ 16050 ընտանիքներ, փաստացի ծախսը կազմել է շուրջ 3970.1 մլն դրամ: Երեխայի ծննդյան միանվագ նպաստներ են ստացել 11225 ընտանիքներ, ծախսը կազմել է 1029.8 մլն դրամ: Մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստներ են նշանակվել 5010 երեխաների աշխատող մայրերի (ամսական 18000 դրամ), փաստացի ծախսը կազմել է 1115.5 մլն դրամ:

Առաջին դասարան հաճախելու կապակցությամբ նպաստներ են ստացել շուրջ 1400 ընտանիքներ (յուրաքանչյուրը՝ 25000 դրամ):

Նախկին ԽՍՀՄ խնայբանկի ՀԽՍՀ Հանրապետական բանկում մինչև 1993թ. հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց ՍՕՏԲ-ներից փոխհատուցում են ստացել 1600 քաղաքացիներ, վճարվել է 260.5 մլն դրամ:

Երևանում գործում են թվով 12 բարեգործական ճաշարաններ, որոնցից են՝ «Առաքելություն Հայաստան» հասարակական բարեգործական կազմակերպությունը, Հայաստանում Գերմանական կարմիր խաչի սեզոնային «Գթության խոհանոցները», «Սոցիալական տունը»՝ իր «Մանկական սնունդ» և «Տնային խնամք» ենթածրագրերով, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ենթակա բարեգործական ճաշարանները: Ավան վարչական շրջանում ստեղծվել է նաև տարեցների ցերեկային խնամքի կենտրոն:

Մշակվել և քաղաքապետարանի կայքէջում գործողության մեջ է դրվել «Ցանկությունների իրականացում» բարեգործական նախագիծը, որի շնորհիվ 2 երկկողմանի ծնողազուրկ երեխաներ ունեցող ընտանիքների հատկացվել են մահճակալներ, համակարգիչ, անկնողնային պարագաներ և հագուստեղեն: Ծրագիրը շարունակական բնույթ է կրում:

Քաղաքապետարանի և սոցիալական հարցերով քաղաքացիների կապը ամրապնդելու նպատակով մշակվել և կայքում բացվել է «Տուր քո հարցը» խորագիրը, որը հնարավորություն է տալիս քաղաքացիներին տեղեկանալ իրենց հուզող հարցերի պատասխաններին:

Երեխաների իրավունքների պաշտպանություն

Երևան քաղաքում գործում են 4 մանկատներ, որոնցից 1 բարեգործական, 7 հատուկ դպրոց, 4 հատուկ կրթահամալիր և երեխաների գիշերօթիկ խնամքի 2 հաստատություն: Թվով 42 դպրոցներում և 8 մանկապարտեզներում իրականացվում է ներառական կրթություն:

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմում գործում է երեխաների իրավունքների պաշտպանության բաժինը, խնամակալության և հոգաբարձության մարմնի գործառույթներն իրականացնում են քաղաքի 12 վարչական շրջանների ղեկավարները, որոնց կից օրենսդրությամբ սահմանված կարգով ստեղծվել են հասարակական հիմունքներով գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովներ:

«Փիփլ ին նիդ», «Սեյվ դը չիլդրեն», «Վորլդ Վիժն» միջազգային հասարակական կազմակերպությունների հետ համատեղ կազմակերպել է երեխաների պաշտպանության ռազմավարական խնդիրներին վերաբերող սեմինարներ, աշխատանքային հանդիպումներ, խորհրդակցություններ:

ՀՀ կառավարության 20.05.2011թ. հ.19 և 17.06.2011թ. հ.23 նիստերի արձանագրություններով հավանության արժանացած Գենդերային ռազմավարության իրականացման միջոցառումների ծրագրերից բխող պահանջների կատարումն ապահովելու նպատակով Երևանի քաղաքապետարանում ստեղծվել է գենդերային հարցերով հանձնաժողով

Երիտասարդության հետ տարվող աշխատանքներ

Երիտասարդության ոլորտի իրավական նորմատիվային միակ փաստաթուղթը երիտասարդական պետական քաղաքականության հայեցակարգն է, որը սահմանում է երիտասարդական պետական քաղաքականության սուբյեկտները, քաղաքականության սկզբունքները, իրականացման նպատակներն ու հիմնական ուղղությունները: Մայրաքաղաքի երիտասարդական կյանքի զարգացման գործում ակտիվ մասնակցություն ունեն հասարակական կազմակերպությունները, բուհերի ուսանողական խորհուրդները: ՀՀ արդարադատության նախարարությունում գրանցված ՀԿ-ների հիսուն տոկոսը երիտասարդական են, կամ զբաղվում են երիտասարդության խնդիրներով, դրանց մեծամասնությունը գործում են Երևան քաղաքում:

Ֆիզիկական կուլտուրա և սպորտ

Երևան քաղաքում գործում են 2 ուսումնական հաստատություններ, 4 մարզական միություններ, 12 մարզական ակումբներ, 14 լողավազաններ, 11 ֆուտբոլի մարզադաշտեր, 24 թենիսի կորտեր, 3 հրաձգարաններ, 5 ստադիոններ, 37 մարզադահլիճներ, 1 նետաձգարան,1 աթլետիկական մանեժ, 1 հեծանվահրապարակ, 3 թիավարության ու վինդսերֆինգի ջրամբարներ, 2 մարզամշակութային կենտրոններ, 1 հավաքական թիմերի ուսումնամարզական կենտրոն, 1 ձիարշավարան, 50 բազմաֆունկցիոնալ փոքր դաշտեր, շուրջ 120 պարզ տիպի մարզահրապարակներ և 54 մարզադպրոցներ (տարբեր գերատեսչական պատկանելության): Երևան քաղաքում մարզական նշանակալի կառույցներն են՝ «Հրազդան» մարզադաշտ, Վ. Սարգսյանի անվան հանրապետական մարզադաշտ, Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր, Տ. Պետրոսյանի անվան շախմատի տուն, շախմատի ակադեմիա, Ֆուտբոլային ակադեմիա, «Միկա» մարզական ակումբ, «Գրանդ սպորտ» մարզական ակումբ, «Օրանժ ֆիտնես» թենիսի մարզական ակումբ, Հայաստանի մարզական միության «Սպարտակ» մարզահամալիր, Հայաստանի մարզական կազմակերպության «Դինամո» մարզահամալիր, ձիասպորտի կենտրոն, հավաքական թիմերի մարզական կենտրոն, հեծանվահրապարակ: Ե

րևանում գործող ուսումնական հաստատություններն են՝ ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտը և Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջը:

Համահայկական 5-րդ խաղերին մասնակցելու նպատակով 10 մարզաձևերից կազմակերպվել են 12 ընտրական մրցաշարեր, ձևավորվել Երևան քաղաքի հավաքական թիմեր, կազմակերպվել ուսումնամարզական հավաքներ, ինչի արդյունքում Երևան քաղաքի հավաքական թիմերը նվաճեցին 26 ոսկե, 20 արծաթե, 21 բրոնզե մեդալներ, ընդհանուր թիմային հաշվարկով մայրաքաղաքի մարզական պատվիրակությունը գրավեց առաջին տեղը: Անցկացվել է ՀՀ նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական ընտանիք» մարզական ստուգատեսի երևանյան փուլը:

Մշակույթ

Երևան քաղաքում գործում են 57 թանգարաններ, որոնցից 4-ը՝ Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ: Դրանք են՝ Երևան քաղաքի պատմության, Ժամանակակից արվեստի, Կարեն Դեմիրճյանի և «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանները: Երևան համայնքի 18 թատրոններից 3-ը Երևանի քաղաքապետարանի ենթակայության են՝ Հր. Ղափլանյանի անվան դրամատիկական, Պատանի հանդիսատեսի և «Միհր Մկրտչյան» արտիստական թատրոնները: Հաշվառված 31 գրադարաններից 19-ը Երևանի քաղաքապետարանի ենթակայության են:

Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործում են երաժշտական, արվեստի և կերպարվեստի 26 դպրոցներ, 17 մշակույթի տներ, ստեղծագործության և գեղագիտական կենտրոններ, «Հայաստանի փոքրիկ երգիչներ» և Յու. Բախշյանի անվան մանկական ֆիլհարմոնիաները, «Երևան» փողային նվագախումբը, Երևանի կենդանաբանական այգին և «Հայ-Արտ» ՓԲԸ-ն:

Ֆրանկոֆոնիայի օրերի շրջանակներում կազմակերպվել է համերգ՝ Երևանի քաղաքապետարանի երաժշտական և արվեստի դպրոցների սաների ուժերով Ա.Խաչատրյանի անվան տուն-թանգարանում:

Բոլոր թանգարաններում կազմակերպվել են «Թանգարանների գիշեր», ՀՀ անկախության 20-ամյակին նվիրված մի շարք ցուցահանդեսներ, միջոցառումներ:

Մանկապատանեկան ստեղծագործության քաղաքային կենտրոնում հոկտեմբերի 24-28 անցկացվել է Տոսկանայի շաբաթ Երևանում: Կենտրոնը հյուրընկալել է Իտալիայի Տոսկանա նահանգի պատվիրակությանը, ձեռք են բերվել մի շարք համատեղ ծրագրերի իրականացման պայմանավորվածություններ:

«Նոր անուններ» հիմնադրամի կողմից նոյեմբերի 1-ին և 2-ին Երևանի քաղաքապետարանի երաժշտական և արվեստի դպրոցներում Մոսկվա քաղաքի մասնագետների կողմից կազմակերպվել է վարպետության դասեր, ունկնդրումներ, համատեղ համերգ:

ՀՀ մշակույթի օրերը Բելառուսում ծրագրի շրջանակներում Բելառուսի Գոմել քաղաքում կազմակերպվել է «Պատմական Հայաստանի տարազ» խորագրով ցուցահանդես:

2011 թվականին քաղաքապետարանն իր մասնակցություն է ցուցաբերել «Ոսկե Ծիրան» մրցանակաբաշխությանը, Անիմացիոն ֆիլմերի միջազգային և Երևանում անցկացված ռոք փառատոններին:

Տուրիզմ

Երևանում գործում են շուրջ 150 զբոսաշրջային ընկերություններ, որից 90–ը ավիագործակալություններ են, ինչպես նաև 47 հյուրանոցներ և հյուրանոցային հանգրվաններ: Հյուրանոցային տնտեսությունը Երևանում բաղկացած է 1734 համարից և 2966 տեղից:

2011թ. ստեղծվել է զբոսաշրջության և կանաչ գոտիների զարգացման աշխատանքային խումբ՝ կարճաժամկետ և երկարաժամկետ ծրագրերով: Տարեսկզբին կազմակերպվել են տարաբնույթ քննարկումներ շահագրգիռ կազմակերպությունների հետ զբոսաշրջության ոլորտում խոչընդոտների և խնդիրների ամփոփման և առաջնահերթ ներդրումներ պահանջող ծրագրերի մշակման նպատակով:

2011թ. սեպտեմբերի 17–ին Երևանում զբոսաշրջության զարգացման ծրագրերի և ՀՀ Անկախության 20-ամյակի շրջանակներում Երևանի քաղաքապետարանը մշակել և իրականացրել է «Երևան Սիթի տուր» զբոսաշրջային ծրագիրը: Այդ նպատակով ներկրվել են 2 զբոսաշրջային ավտոբուսներ:

Երևանի քաղաքապետարանի կողմից մշակվել և տպագրվել են զբոսաշրջիկների համար նախատեսված քաղաքային (իմիջային) և ժամանցային երիտասարդական ուղեցույցներ:

ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ 2012 ԹՎԱԿԱՆԻՆ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Հիմնախնդիրներ	2012 թվականին նախատեսվող միջոցառումներ
Քաղաքաշինություն և ճարտարապետություն	
	Քաղաքաշինական ծրագրային և նախագծային փաստաթղթերի ստեղծում ▪ Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի գոտիավորման նախագծի մշակում. ▪ Նոր Նորք վարչական շրջանի գոտիավորման նախագծի մշակում. ▪ Նուբարաշեն վարչական շրջանի գոտիավորման նախագծի մշակում. ▪ Ավան, Էրեբունի, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանների տարածքների չկատարված հատվածների գոտիավորման նախագծի մշակում. ▪ Գլխավոր հատակագծի իրականացման 2006-2008թթ. ընթացքում մշակված ծրագրերով նախատեսված հետագա աշխատանքների իրականացում։ ***Քաղաքաշինական կառուցապատման ծրագրեր*** Գերակա հանրային շահ ճանաչված հասարակության և պետության կարիքների համար օտարվող հողամասերում քաղաքաշինական համալիրների կառուցում (իրացման, նախագծային և շինարարական աշխատանքների իրականացում)՝ ▪ «Հին Երևան» պատմաճարտարապետական միջավայր ▪ 30-րդ թաղամաս ▪ Կոնդ թաղամաս ▪ Գլխավոր պողոտա (Արամ և Բուզանդ փողոցներին հարակից տարածքներ), ▪ Նալբանդյան, Թումանյան, Ավագ Պետրոսյան փողոցներով պարփակված տարածք (9054 քմ) ▪ Պուշկին, Տերյան, Եզ.Կողբացի և Հին Երևանցու փող. պարփակված տարածք (8391,7 քմ) ▪ Պռոշյան,Դ.Դեմիրճյան փողոցներով և Սիրահարների զբոսայգուն հարակից տարածք (4.04 հա, Կոզեռն) ▪ Նալբանդյան, Պուշկին և Աբովյան փողոցներով և Սախարովի հրապարակով պարփակված տարածք (8743 քմ) ▪ Մյասնիկյան պող. և Արմենակյան փող. կից տարածք (9610 քմ) ▪ Կրկեսին հարակից տարածք

	Ստորգետնյա ավտոկայանատեղերի կառուցում Մայրաքաղաքի կենտրոնական փողոցների երկկողմ երթևեկության աջ գոտին տրանսպորտային միջոցների ժամանակավոր կայանումից ազատելու, երթևեկության խնդիրների բարելավման նպատակով կազմված Երևան քաղաքի ստորգետնյա ավտոկայանատեղերի կառուցման համալիր ծրագրի շրջանակում շարունակվելու է համագործակցությունը մասնավոր ներդրողների հետ: ***Քաղաքի կարևորագույն հատվածներում կիսակառույց և անավարտ շինարարության օբյեկտների ավարտման հետ կապված աշխատանքները՝*** ▪ «Սևան» հյուրանոցի տեղում ▪ «Անի» հյուրանոցի հարևանությամբ ▪ Բազմաֆունկցիոնալ կառույց կայարանամերձ հրապարակում (տրամադրվել է ՃՀԱ, և շինարարական հրապարակի կազմակերպման և գոյություն ունեցող կառույցի քանդման թույլտվություն): ***Տրանսպորտային և մայրուղային ցանցի զարգացում*** ▪ Դավթաշեն կամուրջ - Հալաբյան փողոց - Աշտարակի խճուղի կապ (մայրուղու երկարությունը՝ 2250 մետր, անցուղիները՝ 2380 մետր, ընդհանուրը՝ 4630 մետր): ▪ Երևան քաղաքի նախագծային ճանապարհների և փողոցների նախագծանախահաշվային փաստաթղթերի պատվիրում և շինարարական աշխատանքների կատարում ▪ Իսակովի պողոտա-Լենինգրադյան փողոց (շինարարություն) ▪ «Հյուսիսային ճառագայթ» թաղամասի առանցքով՝ «Հայաստան» հուշահամալիրից մինչև Բաբայան փողոց հետիոտն ուղու և ճանապարհ (նախագծային փաթեթի վերանայում և շինարարություն) ▪ Հյուսիսային պողոտա-Տերյան-Պուշկին-Լալայանց (շինարարություն) ▪ «Ալմաստ» գործարանի ե/գ կայարանի հարակից տարածքի ճանապարհ (շին.) ▪ Գլխավոր պողոտայի վերակառուցում՝ Սարյան-Եզ. Կողբացի փող. հատված (շին.) ▪ Բագրևանդ փողոցի վերակառուցում (շին.) ▪ Սիլիկյան թաղամաս տանող ճանապարհի վերակառուցում (շին.) ***Հետիոտնային անցումներ*** Հետիոտնի տեղաշարժման անվտանգության ապահովման և տրանսպորտի անարգել աշխատանքի նպատակով մշակված հետիոտն անցումների (վերգետնյա կամ ստորգետնյա) կառուցման ծրագրով, որպես նոր քաղաքաշինական մոտեցում՝ քայլեր են ձեռնարկվում նաև մասնավոր ներդրողներ ներգրավելու ուղղությամբ: 2012թ. նախագծային փաթեթների կազմման համար քննարկման կներկայացվեն անցումների առաջարկներ

	▪ Թբիլիսյան խճուղու հ.22/9 հասցեի մոտ (առկա է ՃՀԱ) ▪ Ագաթանգեղոս-Խորենացի փողոցների հատման մասում ▪ Իսակովի պողոտայում՝ նոր կառուցված հեծանվահրապարակի մոտ Հավանության են արժանացել վերգետնյա անցումների համար նախատեսվող հետևյալ թվով 5 հասցեները ▪ Արշակունյաց պող.-Շահամիրյանների խաչմերուկ՝ <<Գրանդ Քենդիի>> մոտ ▪ Խանջյան-Չայկովսկի փ. Խաչմերուկ (դպրոցի մոտ) ▪ Մյասնիկյան պող. Զրաշխարհի դիմաց ▪ Կոմիտասի պող. <<Երևան Սիթի>> սուպերմարկետի մոտ ▪ Հալաբյան-Արզումանյան փող. խաչմերուկ Հետագա լրացուցիչ ուսումնասիրությունների դեպքում հնարավոր կհամարվեն նաև հետևյալ թվով 3 հասցեները ▪ Ազատության պող.-Վարշավյան փող. խաչմերուկ ▪ Սարի թաղ. Նոր ճանապարհի վրա /իրացման խնդիր/ ▪ Չարենցի փող. Հ.10 դպրոցի մոտ /իրացման խնդիր/ *Տեղազննմամբ հնարավոր են համարվել նաև հետևյալ թվով 11 հասցեները* ▪ Ռուբինյանց-Ահարոնյան փող. խաչմերուկ ▪ Ազատամարտիկների փող. հ.194 դպրոցի մոտ ▪ Ազատամարտիկների-Ս.Դավիթ–Կուստոյի փող. խաչմերուկ (թաղապետարանի մոտ) ▪ Աճառյան-Ծարավ Աղբյուրի փող. խաչմերուկ ▪ Արտաշիսյան փող. հիվանդանոցի մոտ ▪ Բ.Մուրադյան փող. Ռազմական ակադեմիայի մոտ ▪ Դ.Բեկի փող. Հայորդաց տան մոտ ▪ Էրեբունու փող. ավտոդպրոցի մոտ ▪ Տ.Մեծի պող. Հ.119 դպրոցի մոտ ▪ Գ.Չաուշ-Մելքումովի փող. խաչմերուկ ▪ Մոլդովական-Բագրևանդի փող. խաչմերուկ Երևան քաղաքում հուշարձանների տեղադրման ներկայացված առաջարկների հետ կապված 2011թ. սկսված գործընթացների շարունակություն ▪ Ալեքսանդր Մանթաշյանցի (հայ մեծանուն բարերար) հուշարձանը պատրաստ է, տեղադրման հետ կապված հարցերն ընթացքի մեջ են ▪ Գարեգին Նժդեհի հուշարձան (քննարկումներ են եղել, նոր մրցույթ է կայացել, ընդունվել է քաղաքապետի որոշում) ▪ Դերենիկ Դեմիրճյանի հուշարձան (արձանը առկա է, տեղի ընտրությունը կատարված է դեռևս չի

	տեղադրվել) ▪ Կարեն Դեմիրճյանի հուշարձան (տեղի ընտրությունը կատարված է, արձանի մրցույթը կհայտարարվի 2012թ.) ▪ Ջիվան Գասպարյանին, Լևոն Մադոյանին, Վաչե Հովսեփյանին նվիրված հուշարձանային համախումբ (տեղի ընտրության վերաբերյալ առկա Երևանի քաղաքապետի որոշում, սակայն արձանի կատարումը ընթացքի մեջ է) ▪ Չեռնոբիլի և այլ միջուկային աղետների ու վթարների հետևանքով տուժածների և զոհվածների հիշատակին նվիրված հուշակոթող (նախագիծը ընթացքի մեջ է) ▪ Ա.Պուշկինի հուշարձան (տեղի ընտրության հարցը քննարկվում է)
Շինարարության և բարեկարգման, ճանապարհաշինության ոլորտ	
➢ *մայրաքաղաքը կենտրոնը արևմուտքից շրջանցող ճանապարհների բացակայություն* ➢ *վերգետնյա հետիոտնային անցումների ոչ բավարար քանակ* ➢ *արտաքին լուսավորության ցանցի մաշվածություն և բացակայություն* ➢ *ոռոգման համակարգի մաշվածություն և բացակայություն* ➢ *ջրային կառույցների մաշվածություն* ➢ *անբարեկարգ բակային տարածքներ*	▪ 826 հազ. քմ ասֆալտ-բետոնե ծածկի ընթացիկ վերանորոգման աշխատանքներ (4130283.0 հազ.դրամ)որի 60%-ը նախատեսվում է իրականացնել բակային տարածքներում: ▪ Վթարված եզրաքարերի վերանորոգման և փոխարինման նպատակով նախատեսված է 14000.0 հազ.դրամ: ▪ Վթարային հենապատերից առաջնայինների վերանորոգում: Ծրագրի համար նախատեսվել է 119000.0 հազ.դրամ: ▪ Հետիոտն անցումների վերանորոգման աշխատանքների համար կտրամադրվի 12500.0 հազ.դրամ: ▪ Երևան քաղաքի կամուրջների սպասարկման նպատակով կտրամադրվի 90000.0հազ.դրամ: ▪ 2011թ. սկսած Հրազդանի կիրճի բարեկարգման աշխատանքներն ավարտելու համար հատկացվել է 650000.0 հազ.դրամ: ▪ Ալմաստ գործարանի ե/գ կայարանի հարակից տարածքի ճանապարհի կառուցման, Դավիթ Բեկ փողոցի բարեկարգման , Գլխավոր պողոտայի վերակառուցման, Բագրևանդ փողոցի վերակառուցման , Լալայանց-Պուշկին փողոցների հատվածի և Հյուսիսային ճառագայթի գրունտային ճանապարհի կառուցման, Բագրատունյաց և Սեբաստիա փողոցների տրամվայի գծերի ապամոնտաժման և ասֆալտապատման, Սիլիկյան թաղամաս տանող ճանապարհի մասնակի վերակառուցման, Ծարավ Աղբյուրի փողոցի վերակառուցման, Հալաբյան-Աբելյան փողոցների վերանորոգման և մայթերի վերանորոգման ծրագիր (3190000.0հազ.դրամ) ▪ 24 ջրային կառույցների շահագործում և սպասարկում՝ 300.0 մլն դրամ ▪ Շենքերի մաքրման աշխատանքներ՝ 1100000.0 հազ. դրամ: ▪ 10 վարչական շրջաններում թվով 12 մինի–ֆուտբոլի դաշտերի կազմակերպման աշխատանքներ, բակերի բարեկարգում՝ 944432.1 հազ.դրամ դրամ: ▪ Թվով 70 կամարանցումների վերանորոգում և գունազարդման աշխատանքներ (86800.0 հազ.դրամ):

Արտաքին լուսավորություն	
	▪2012թ. Երևանի բյուջեից արտաքին լուսավորության ցանցի շահագործման և պահպանման աշխատանքների համար նախատեսվում է հատկացնել 1.696 մլրդ դրամ: ▪Նախատեսվում է իրականացնել լուսավորման ենթակա փողոցների ու նրբանցքների, ինչպես նաև այգիների ու պուրակների (թվով 27 օբյեկտների) լուսավորման աշխատանքներ, որոնցից 18-ը լուսավորված չեն, իսկ 9 օբյեկտներ լուսավուրված են, բայց ունեն վերանորոգման կարիք: ▪Լուսավորության ցանցի հիմնանորոգման աշխատանքներ 180.0 մլն դրամ, որից փողոցներ՝ 150 մլն, այգիներ՝ 30 մլն դրամ: ▪Շենքերի գեղարվեստական լուսավորման աշխատանքներ 150.0 մլն դրամ:
Տրանսպորտ	
➢ *ավտոբուսների ոչ բավարար քանակ* ➢ *միկրոավտոբուսների մեծ քանակ* ➢ *տրոլեյբուսների պարկի և էլեկտրատրանսպորտի ենթակառուցվածքների (քարշիչ ենթակայաններ, մալուխային համակարգ, տրոլեյբուսի սյուներ, էլեկտրագծեր և այլն) մաշվածություն և ոչ բավարար քանակ* ➢ *Երևանի մետրոպոլիտենի շահագործման և երթևեկության անվտանգության ցածր մակարդակ* ➢ *կանգառասրահների կահավորվածության ոչ բավարար վիճակ* ➢ *հաշմանդամների տրանսպորտային սպասարկման ցածր մակարդակ* ➢ *տրանսպորտային միջոցների անկանոն կայանատեղերի առկայություն* ➢ *մասնավոր օպերատորների ոչ շահագրգռվածություն մատուցվող տրանսպորտային ծառայությունների մատուցման որակի բարելավման հարցում* ➢ *մեծ և միջին տեղատարողության*	▪Երևանի ներքաղաքային վերգետնյա ուղևորատար տրանսպորտի նոր երթուղային ցանցի հաստատում և ներդնում: ▪ՉԺՀ-ի կողմից ՀՀ կառավարությանը տեխնիկական և տնտեսական աջակցության շրջանակում թվով 249 փոքր դասի քաղաքային ավտոբուսների (թվով 66 ներկրվելու է 2011թ.) տրամադրում (վերասարքավորում՝ հաշմանդամների տեղաշարժն ապահովելու համար): ▪միկրոավտոբուսների քանակի աստիճանաբար կրճատում. ▪տրոլեյբուսային տնտեսության բարելավմանն ուղղված միջոցառումների իրականացում. ▪Երևանի քաղաքային հասարակական տրանսպորտի կանգառների կահավորում: ▪Երևանի մետրոպոլիտենի շահագործման և երթևեկության անվտանգության բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացում: ▪ավտոկայանատեղերի կանոնակարգմանն առնչվող օրենսդրական և կազմակերպչական միջոցառումների իրականացում. ▪Միասնական տոմսային համակարգի անցման գործընթացի շրջանակներում ուղեվարձի գանձման ավտոմատացված սարքերի հնարավոր ներդրման աշխատանքների նախատեսում. ▪2011թ. սկսվել են վերգետնյա ուղևորատար տրանսպորտի միասնական երթուղային ցանցի մշակման աշխատանքները, որի ներդրումը նախատեսվում է 2012 թվականին: Վերգետնյա տրանսպորտի միասնական երթուղային ցանցը պետք է ապահովի՝ Երևանի մետրոպոլիտենի հնարավորությունների առավելագույն օգտագործումը, քաղաքի կենտրոնական և մագիստրալային փողոցների բեռնաթափումը, ավտոբուսային ծառայությունների նախապատվությունը և հասարակության բոլոր խավերի համար մատչելի, հարմարավետ, անվտանգ և հուսալի փոխադրումների կազմակերպումը, ինչպես նաև կնպաստի պետական և մասնավոր սեկտորների միջև համագործակցության խորացմանը: ▪Երևան քաղաքի և «Զվարթնոց» օդանավակայանի միջև ժամանակակից միջազգային չափանիշներին

ավտոբուսների ներմուծման համար ոչ բարենպաստ պայմաններ թե պետական և թե մասնավոր օպերատորների համար ➢ *մրցույթների թափանցիկության ցածր աստիճան* ➢ *մասնավոր օպերատորների թիվը նվազեցնելու և այդ բնագավառում թվով քիչ, սակայն բարձր որակավորում ունեցող մասնագիտացված ավտոբուսային ընկերությունների) ներգրավման համար բարենպաստ պայմանների բացակայություն:* ➢ *հասարակական տրանսպորտային ծառայությունների մատուցման քաղաքականության վերանայման անհրաժեշտություն հիմնված՝ հասարակական տրանսպորտի զարգացման նոր քաղաքականության և առաջարկվող նոր երթուղային ցանցի հայեցակարգի վրա:* ➢ *պետական և մասնավոր սեկտորների համագործակցության անբավարար մակարդակ*	համապատասխան ավտոբուսային երթուղու կազմակերպումը և միջմարզային ավտոբուսային երթուղիների ուղեգծերի ինտեգրումը Երևան քաղաքի տրանսպորտային համակարգի հետ: ▪ առաջիկայում նախատեսվում է օդանավակայանի և նրան հարակից կարգոտերմինալի տարածքներում ստեղծել լոգիստիկ կենտրոն և ազատ տնտեսական գոտի, ինչը զգալիորեն կմեծացնի ուղևորահոսքի ծավալները դեպի օդանավակայան և հակառակ ուղղություններով: ▪ իրավական և կանոնակարգող փաստաթղթերի մշակում ▪ Երևանտրանսի և պետական/համայնքային օպերատորների միջև պայմանագրային փաստաթղթերի մշակում. ▪ որակի չափանիշների մշակում մասնավոր օպերատորների համար:
Կոմունալ ոլորտ	
Ջրամատակարարում և ջրահեռացում	
➢ *ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցման ցածր որակ* ➢ *խմելու ջրի կորուստի բարձր տոկոս* ➢ *ջրամատակարարման և ջրահեռացման ցանցի ոչ բավարար վիճակ* ➢ *պոմպակայանների և բակային պոմպերի մաշվածություն,* ➢ *մակերևութային ջրերի հեռացման համակարգի շահագործման ցածր մակարդակ*	▪ Կայուն ջրամատակարարում, ջրատար համակարգի և բաշխիչ ցանցի կառավարում, կորուստների կրճատում ▪ Պայմանագրային 5-րդ տարում շարունակվելու են ջրամատակարարման բաշխիչ ցանցի գոտիավորման, ճնշման կարգավորիչ փականների տեղադրման, հոսակորուստների հայտնաբերման և վերացման աշխատանքները: ▪ Ուղորտի արդյունավետության բարձրացման նպատակով նախապատրաստվում է ցանցի կառավարման և տեխնիկական տվյալների փոխանցման ավտոմատացված համակարգի ստեղծում: ▪ Օրվա ընթացքում Երևան քաղաքում ջրամատակարարման միջին տևողությունը 5-րդ տարում կազմել է 88.6% /21.26 ժամ/, իսկ 6-րդ տարվա համար նախատեսված է 89.5%, որը կկազմի 21.5 ժամ: ▪ Քիչ ջրամատակարարման ժամեր (4-6 ժամ) ունեցող տարածքներում նախատեսվում է ապահովել

	նվազագույնը 8-ժամյա ջրամատակարարում: ▪ Հոսակորուստները պայմանագրային 6-րդ տարում նախատեսվում է նվազեցնել մինչև 256.7 մլն խմ կամ 7.6%-ով: ▪ Կեղտաջրերի մաքրում և շրջակա միջավայրի պահպանում 2012թ. բյուջեում ներառված են հետևյալ ծրագրերի գծով մրցույթների իրականացումը՝ 1. Ջրամատակարարման ցանցի ընդլայնում՝ 2.5 մլն եվրո կամ 1,313.6 մլն դրամ 2. Միացումների նորացում 10 000 կետերում՝ 3.3 մլն եվրո կամ 1,733.9 մլն դրամ 3. Մայր ջրագծերի խողովակների նորացում՝ 4.5 մլն եվրո կամ 2,364.5 մլն դրամ 4. Ջրամատակարարման ցանցի հեռակառավարման համակարգ՝ 2.03 մլն եվրո կամ 1,066.7 մլն դրամ. Մրցույթների արդյունքները ամփոփելուց հետո կանխատեսվում է վերոնշված ծրագրերի վրա 2012թ. ընթացքում ծախսել մոտ 4.0 մլն եվրո կամ 2,101.8 մլն դրամ: «Ակրացիա» կայանի և հիմնական կոյուղագծերի վերականգման աշխատանքների համար նախատեսվում է 12.34 մլն եվրո կամ 6,484.1 մլն դրամ, ըստ նախնական կանխատեսումների 2012թ. ընթացքում այս նպատակներով կարող է ծախսվել մոտ 4.0 մլն եվրո կամ 2,101.8 մլն դրամ: Ըստ նախնական կանխատեսումների 2012թ. ընթացքում ընդհանուր կարող է ծախսվել մոտ 8.0 մլն եվրո կամ 4,203.6 մլն դրամ: Պայմանագրային 6-րդ տարում նախատեսվում է կատարել 1.361,0 մլն ՀՀ դրամի աշխատանքներ:
Բազմաբնակարան շենքերի կառավարում	
➢ *բնակարանային ֆոնդի մաշվածություն* ➢ *սեյսմիկ խնդիրների առկայություն* ➢ *նկուղների կոմունիկացիաների վատթար վիճակ* ➢ *սեփականատերերի իրավունքների և պարտականությունների իրազեկվածության ցածր մակարդակ* ➢ *շենքերի տեխնիկական անձնագրավոր-ման բացակայություն:*	▪ շենքերի տեխնիկական անձնագրավորման աշխատանքներ ▪ բազմաբնակարան շենքերի մուտքերի վերանորոգում ▪ բազմաբնակարան շենքերի հարթ և թեք տանիքների վերանորոգում 290284.2 հազ.դրամ ▪ մայրաքաղաքի բազմաբնակարան շենքերի շքամուտքերի գույքագրումն ու հիմնանորոգումը; ▪ հիմնանորոգման և ներդրումային ծրագրերի ներգրավման նպատակով վերելակային տնտեսության քանակական և տեխնիկական իրավիճակի գնահատումը; ▪ «Գեղեցիկ Երևան» ծրագրով Ավան վարչական շրջանում կիրականացվեն թվով 8 բազմաբնակարան շենքերի 14 շքամուտքերի վերանորոգման աշխատանքներ:
Վերելակային տնտեսություն	
➢ *վերելակների պարկի մաշվածություն* ➢ *շահագործման և սպասարկման*	▪ դեպի դուրս բացվող թվով 71 վերելակները նորով փոխարինելու համար նախագծա-նախահաշվային փաստաթղթերի պատվիրում

համակարգի ոչ բավարար մակարդակ ➢ *շահագործման համար վտանգավոր վերելակների առկայություն*	▪ կիրականացվեն կապիտալ բնույթի աշխատանքեր (75000.0 հազ.դրամ)
Աղբահանություն	
➢ *ինստիտուցիոնալ և իրավական շրջանակների անարդյունավետությունը, կառավարության ռազմավարության և քաղաքականության բացակայությունը, ֆինանսական անարդյունավետությունը, ներդրումների և կատարման դրդապատճառների (խրախուսման) անբավարար քանակը նպաստեցին Երևանում աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների անբավարար կառավարման մակարդակին* ➢ *քաղակի աղբահանության և սանիտարական մաքրման համակարգը տնտեսական աճին զուգընթաց չէ, ներառյալ առաջացած թափոնների քանակության աճը, թափոնների բաղադրության փոփոխությունը* ➢ *սանիտարական մաքրման և աղբահանության ծառայությունների ներկա ապակենտրոնացված մատուցումը բնութագրվում է ծառայությունների մատուցման որակի տարբերմամբ* ➢ *առկա քաղաքի աղբավայրը, որը գտնվում է քաղաքի հարավային հատվածում՝ Նուբարաշենում, լիարժեք չի կառավարվում՝ ներկայացնելով առողջության և շրջակա միջավայրի մեծ վտանգ՝ պայմանավորված աղբավայրում գազի արտանետումներով, թափոնների այրմամբ և ջրի որակի վրա*	▪ կոշտ թափոնների կառավարման (աղբահանության և սանիտարական մաքրման) ժամանակակից համակարգի ներդրում: ▪ կոմունալ վարձավճարների հավաքագրման մեկ միասնական համակարգի ստեղծում: ▪ անցումային փուլում աղբահանության վարձավճարների գումարների հավաքագրման գործընթացի բարելավման նպատակով միջոցառումների ծրագրի մշակում ու իրագործում; Հիմք ընդունելով Երևանի քաղաքապետարանի ավագանու N295-Ա որոշումը՝ 2011թ-ի օգոստոսի 20–ին հայտարարվեց մրցակցային երկխոսության եղանակով մրցույթ՝ աղբահանության և սանիտարական մաքրման (ներառյալ ձմռան ամիսներին) ծառայությունների գնման նպատակով: Մրցույթին մասնակցելու հրավեր է ուղարկվել 21 միջազգային ընկերությունների, որոնցից 4-ը անցել են նախաորակավորման փուլը: Ըստ սահմանված ընթացակարգի, ինչպես նաև մրցույթի անցկացման նախնական ժամանակացույցի՝ (մինչև 2012թ. փետրվարի 15–ը) նախատեսվում է իրականացնել Ծառայություններ մատուցող երկու միջազգային օպերատորների վերջնական ընտրություն և համապատասխան կոնցեսիոն պայմանագրերի շնորհում 10 տարի ժամկետով: Մրցույթում հաղթող ճանաչված ընկերությունները կկարողանան մեկնարկել ծառայությունների մատուցումը ոչ շուտ քան 2012 թվականի հուլիսի 1-ը: Աղբահանության և սանիտարական մաքրման (ներառյալ ձմռան ամիսներին) ծառայությունների աշխատանքներում միջազգային օպերատորների ներգրավումը հիմնված է նշված ոլորտում պահանջվող շուրջ 10 մլրդ դրամի ներդրման, միջազգային փորձի և աշխատանքային նոր մոտեցումների կիրառման ակնկալիքով: 2012թ. նախատեսվում է Երևան քաղաքի աղբահանության և սանիտարական մաքրման, ներառյալ ձմռան ամիսներին, աշխատանքների իրականացման համար Երևանի բյուջեից հատկացնել շուրջ 5015.0 մլն ՀՀ դրամ: **Նուբարաշենի աղբավայր** Ներկա դրությամբ «Եվրոպական վերակառուցման և զարգացման» բանկի միջնորդությամբ Ավստրիական խորհրդատվական «Hydroingenere-RCE – KPC Tranceproject» կոնսորցիումը իրականացնում է նոր աղբավայրի նախնական տեխնիկա-տնտեսական հիմնավորման մշակման

ազդեցությամբ ➢ *ոլորտում օգտագործվող տեխնիկայի և սարքավորումների մեծ մասը մաշված է և աքկա է շուրջ 10.0 մլրդ դրամի ներդրումների անհրաժեշտություն*	աշխատանքները, որը կավարտվի 2012 թվականի առաջին եռամսյակում: Նշված աշխատանքներն իրականացնելուց հետո կներկայացնի հաշվետվություն, որի հիման վրա և «Integrated Skills Limited» խորհրդատվական ընկերության աջակցությամբ հնարավոր կլինի իրականացնել Նուբարաշենի աղբավայրի (ՆՖԿՇ) նախագծում-ֆինանսավորում-կառուցում և շահագործում ծրագիրը:
Առևտուր և սպասարկում	
➢ *մինի շուկաների ոչ բավարար քանակ* ➢ *հասարակական զուգարանների ոչ բավարար քանակ* ➢ *բացօթյա առևտրի առկայություն* ➢ *Ստորգետնյա անցումներում առևտուրի ցածր մակարդակը* ➢ *Երևան քաղաքի փողոցներում և պողոտաներում տեղակայված կրպակների (տաղավարների) առկայությունը*	▪ Բացօթյա առևտրի նկատմամբ հսկողության իրականացում և կանոնակարգում: ▪ Երևան քաղաքի վարչական շրջաններում գյուղատնտեսական արտադրանքի նոր շուկաների կազմակերպման, ինչպես նաև փոքրածավալ շուկաների ստեղծման նպատակով տեղակայման վայրերի որոշում, դրանց նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման համար մրցույթի կազմակերպում, տեխնիկական առաջադրանքի մշակում: ▪ Շրջիկ առևտրի միջոցով իրականացվող առևտրի կանոնակարգմանն ուղղված օրենսդրական առաջարկությունների ներկայացում: ▪ Հասարակական զուգարանների պահպանմանն ուղղված միջոցառումներ: ▪ Հանրային սննդի, զվարճանքի օբյեկտների, այդ թվում գիշերային ակումբների՝ հատկապես բազմաբնակարան շենքերի ծավալներում գործող, և բացօթյա սրճարաններում հնչեցվող երաժշտության վերաբերյալ կանոնակարգող իրավական ակտի ընդունում: ▪ Առևտրի և ծառայությունների ոլորտի օրենսդրական դաշտի կատարելագործման նպատակով առաջարկությունների ներկայացում («Կենդանիների մասին», «Կենդանիների պաշտպանության մասին» օրենքների նախագծերի մշակման նպատակով): ▪ Երևան քաղաքում կենդանիների շուկաների կառուցման նպատակով հողամասերի առանձնացում, նախագծանախահաշվային փաստաթղթերի և տեխնիկական առաջադրանքի մշակում: ▪ Թափառող կենդանիների կացարանի և կլինիկայի կազմակերպում, վնասազերծման աշխատանքների նկատմամբ հսկողության իրականացում:
Բնապահպանություն	
➢ *մայրաքաղաքի մուտքերի անբարեկարգ վիճակ* ➢ *պաշտպանիչ տնկարկների բացակայություն*	▪ Կանաչ տարածքների պահպանման միջոցառումներ (1311256.3 հազ.դրամ): ▪ Հանգստի գոտիների և զբոսայգիների կառուցում ու պահպանում (162000.0 հազ.դրամ) ▪ Սիզամարգերի ստեղծում և ծաղկապատում (405270.8 հազ.դրամ): Այդ ծրագրի շրջանակում նախատեսվում է գազոնապատել և ծաղկապատել քաղաքի և փողոցների շրջակայքը: ▪ Կիրականացվեն գետերի հուների մաքրման աշխատանքներ (41110.1 հազ.դրամ) ▪ Ոռոգման ցանցերի անցկացում (327937.9 հազ. դրամ՝ Երևանի բյուջե)՝ ✓ *Դավթաշեն վ/շ-«Արմենիա» հեռուստաընկերության շրջակայք* ✓ *Ավան վ/շ- Մյասնիկյան –Աճառյան պողոտաների աջ և ձախ հատվածներ*

	✓ *Քանաքեռ–Զեյթուն վ/շ-Դ.Անհաղթի փողոց, Դրոյի փողոց* ✓ *Աջափնյակ վ/շ-ՀԱլաբյան փողոցի միջնաշերտ* ▪ Պուրակների բարեկարգում՝ « Շողակաթ» հեռուստաընկերության հարակից պուրակ -09.4 հա
Անշարժ գույքի կառավարում	
➢ *վթարային, քանդման ենթակա բազմաբնակարան բնակելի և հանրակացարանային շենքերի առկայություն* ➢ *Երևան համայնքի անշարժ գույքի հաշվառման համակարգային ծրագրի բացակայություն* ➢ *Նախկինում սեփականաշնորհված հողամասերի հաշվառման գույքագրման գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման հարցեր* ➢ *Նախկին շրջխորհուրդների գործկոմների որոշումներով չկառուցվող շենքերից քաղաքացիներին հատկացված բնակարանային խնդիրներ* ➢ *ՀՀ կառավարության 2000թ. հոկտեմբերի 25-ի հ. 683 որոնշմամբ հաստատված ծրագրի իրականացման հարցեր* ➢ *Երևան համայնքի սեփականություն հանդիսացող գույքի օգտագործման արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումներ*	▪ Միջոցներ կձեռնարկվեն վթարային քանդման ենթակա բազմաբնակարան բնակելի շենքերի, հանրակացարանների, քանդման և բնակիչների վերաբնակեցման առաջնահերթությունները ճշտելու ուղղությամբ՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 25-ի հ.682 որոշմամբ հաստատված կարգը և ՀՀ քաղաքաշինության նախարարության տրամադրված տեղեկատվությունը: ▪ Կշարունակվեն քննարկումները վթարային բնակելի շենքերից բնակիչների վերաբնակեցման ժամանակ բնակարանային շինարարությունը տվյալ վարչական շրջանի սահմաններում իրականացնելու շուրջ: ▪ Կավարտվի «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ և Երևան քաղաքը, որպես համայնքի ձևավորմամբ պայմանավորված Երևան քաղաքի սեփականություն հանդիսացող գույքի՝ (գրանցված և չգրանցված) տարեկան գույքագրման և հաշվառման աշխատանքները, կշարունակվեն նախկինում սեփականաշնորհված հողամասերի հաշվառման, գույքագրման, գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման գործառույթները: ▪ Ավարտին կհասցվի Երևան համայնքի անշարժ գույքի հաշվառման համակարգչային ծրագրի մշակման և շահագործման ներդրման գործընթացը: ▪ Կհաշվառվեն նախկին շրջխորհուրդների գործկոմների որոշումներով չկառուցվող բնակելի շենքերից քաղաքացիներին տրամադրված որոշումները, արդյունքներից ելնելով կնախապատրաստվեն խնդրի կարգավորման առաջարկություններ: ▪ Կուսումնասիրվի ՀՀ կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 25-ի հ.683 որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ կապված Երևանի քաղաքապետարան ստացված հարցերը, արդյունքներից ելնելով կներկայացվի առաջարկություններ խնդրի կարգավորման համար: ▪ Հաստատված ժամանակացույցի համաձայն ուսումնասիրություններ կկատարվեն Երևանի վարչական շրջաններում կապված նախադպրոցական ուսումնական հաստատություններում առկա և օգտագործման տրամադրման ենթակա տարածքներում: ▪ Միջոցներ կձեռնարկվի «Գնումների մասին» ՀՀ օրենքի շրջանակում Աջափնյակ վարչական տարածքում գնելու 98 բնակարաններ, նույն վարչական շրջանում գտնվող քանդման ենթակա բազմաբնակարան շենքերից ընտանիքների վերաբնակեցման ուղղությամբ (1000000.0 հազ.դրամ՝ Երևանի բյուջե): ▪ Նախատեսվում է ձեռքբերել Երևան համայնքի սեփականություն հանդիսացող գույքի գնահատման և հաշվետվության տրամադրման ծառայություններ

Ներդրումային ոլորտ	
➢ *Երևանի մրցակցային առավելությունների վերլուծության բացակայություն* ➢ *Ներդրումային միջավայրի ոչ բավարար մակարդակ* ➢ *Օտարերկրյա ներդրումների ցածր մակարդակ* ➢ *Ներդրումային առաջարկների վերաբերյալ տեղեկատվության բացակայություն* ➢ *Ներդրումների խթանման ոչ բավարար մակարդակ*	▪ Մշակված ներդրումային ծրագրերի իրականացում՝ մասնավոր ներդրումների կողմից ֆինանսավորման առկայության դեպքում: ▪ «Հաղթանակ» զբոսայգու վերակառուցում և արդիականացում՝ 60.0 մլն ԱՄՆ դոլար ▪ «Նոյլենդ» զբոսաշրջության կենտրոն՝ 40.0 մլն ԱՄՆ դոլար ▪ «Արտսիթի» արվեստի և զբոսաշրջության կենտրոն՝ 25 մլն ԱՄՆ դոլար ▪ Էրեբունի պատմահնագիտական արգելոց-թանգարանի վերակառուցման հայեցակարգի էսքիզային մշակում (10000.0 հազ.դրամ): ▪ Միջազգային ներդրումային ցուցահանդեսների մասնակցություն: ▪ Երևանի ներդրումային անձնագրի տպագրություն: ▪ Երևանի ներդրումային դաշտը բնութագրող տեղեկատվական նյութերի տպագրություն (20000.0 հազ.դրամ):
Միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից նախատեսվող ներդրումային ծրագրեր	
	Ասիական Զարգացման Բանկի ֆինանսավորմամբ «ԵԿՆ ԾԻԳ» ՀՈԱԿ-ի կողմից իրականացվող Քաղաքային Կայուն Զարգացման Ներդրումային Ծրագրի Ծրագիր 1-ի շրջանակներում 2012թ. նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները՝ Խորհրդատվական ծառայություններ կատեգորիայով՝ հայտարարված երկու միջազգային մրցույթների արդյունքում 2012թ. առաջին կիսամյակում ընտրվելիք կազմակերպությունների միջոցով 1. կկազմվեն Արգավանդի մայրուղուց Շիրակի փողոց տանող քաղաքային ճանապարհային հանգույցի (մայրուղու երկարությունը՝ 1300 մետր, անցուղիները՝ 800 մետր, ընդհանուրը՝ 2100 մետր), ինչպես նաև Շիրակի փողոց և Արշակունյաց պողոտայից Արտաշատի խճուղի քաղաքային ճանապարհային հանգույցի մանրամասն ճարտարագիտական նախագծերը, կպատրաստվեն մրցութային փաստաթղթերը, և որպես հնարավոր տարբերակ նաև Ծրագիր 2-ով նախատեսված շինարարական աշխատանքների նախագծերը, կամփոփվեն Հողի Օտարման և Տարաբնակեցման Ծրագրերը: Այս ճանապարհի հարցի հետ կից ներկայացվել է «Կարմիր բլուր» բնակատեղիի թանգարանացման ուղղությամբ էսքիզ-առաջարկ, որպես պատմության և մշակույթի հուշարձանների տարածքների պահպանման ուղղությամբ իրականացվող միջոցառում. 2. կիրականացվեն ինստիտուցիոնալ բարեփոխումներ քաղաքային տրանսպորտի հատվածում՝ նպատակ ունենալով բարելավել Երևանում տրանսպորտային համակարգի ծախսերի տեսակետից արդյունավետությունը, գրավչությունը և շահութաբերությունը.

	3. տեղական խորհրդատվական կազմակերպության միջոցով կիրականացվի հողի օտարման և տարաբնակեցման արտաքին անկախ մոնիտորինգ: Հողի օտարման և տարաբնակեցման կատեգորիայով՝ ՀՀ կառավարության 2011 թ. մայիսի 26-ի «Երևան քաղաքի և Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արգավանդի գյուղական համայնքի վարչական սահմաններում գտնվող որոշ տարածքներում բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին» թիվ 990-Ն որոշման համաձայն կիրականացվեն բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչված տարածքներում հողի ազդեցության ենթակա անձանց հողի օտարման և տարաբնակեցման աշխատանքներ: Շինարարական աշխատանքներ կատեգորիայով՝ 2012 թ. վերջին նախատեսվում է անցկացվելիք միջազգային մրցույթի միջոցով ընտրել Արգավանդի մայրուղուց Շիրակի փողոց, ինչպես նաև Շիրակի փողոց և Արշակունյաց պողոտայից Արտաշատի խճուղի քաղաքային ճանապարհային հանգույցների (մայրուղու երկարությունը՝ 4340 մետր, անցուղիները՝ 995 մետր, ընդհանուրը՝ 5335 մետր) շինարարական աշխատանքների կատարման համար կապալառու շինարարական կազմակերպություններ, որոնց հետ կկնքվեն շինարարական աշխատանքների կատարման պայմանագրեր: Ընդհանուր առմամբ 2012 թվականին ծրագրով նախատեսվում է իրականացնել մոտ 4000,0 մլն ՀՀ դրամի աշխատանքներ:
Գովազդ և արտաքին ձևավորում	
➢ *գովազդային վահանակների անհամապատասխանություն «Գովազդի մասին» ՀՀ օրենքի դրույթներին* ➢ *քաղաքային ոճին համապատասխան գովազդային վահանակների բացակայություն* ➢ *ուղորդող և տեղեկատվական վահանակների ոչ բավարար քանակ*	▪ կիրականացվի գովազդի գույքագրման, չափագրման աշխատանքներ, կստեղծվի տվյալների շտեմարան՝ տուրքերի գանձնման գործընթաց բարելավելու նպատակով. ▪ մայրաքաղաքի արտաքին տեսքի բարելավման, բարեփոխման համապարփակ և ժամանակակից ծրագրի մշակումն ու կարճ ժամկետներում վերջինի իրականացումը. ▪ կանաչապատ հատվածների (պուրակների, զբոսայգիների, այգիների և այլն) գեղարվեստական ձևավորումը. ▪ կփոխարինվեն առկա գովազդային վահանակները ժամանակակից գովազդային կրիչներով. ▪ կսահմանվեն յուրաքանչյուր փողոցի գովազդային թույլատրելի լուծումները. ▪ աշխատանքներ կտարվեն մասնավոր ներդրողների հետ համագործակցության ընդլայնման ուղղությամբ. ▪ կշարունակվի «Գեղեցիկ Երևան» ծրագրի շրջանակում Երևան քաղաքի արտաքին ձևավորման աշխատանքները (64680.0 հազ. դրամ՝ Երևանի բյուջե). ▪ Կշարունակվի «Ժպտա Երևան» ծրագրով մայրաքաղաքի շենքերի ճակատների կերամիկական սալիկներով մոզայիկ պատկերների տեղադրման աշխատանքները, ինչպես նաև շենքերի կամարանցումների տարբեր նկարազարդումներով ձևավորումները:

Կրթություն	
➢ *կրթական հաստատությունների շենքային պայմանների վատթար վիճակ* ➢ *դպրոցներում անհատական կաթսայա-տների ոչ բավարար քանակ*	▪Դպրոցական շենքերի նորոգման, ժամանակակից պահանջներին համապատասխան գույքով և նորագույն տեխնոլոգիաներով վերազինման ծրագրի իրականացման նպատակով «Օգնի՛ր դպրոցիդ» և «Օգնի՛ր մանկապարտեզիդ» կայքէջերի աշխատանքի շարունակականության ապահովում: ▪Նոր ուսումնական տարվա մշակութային ծրագրի իրականացման մեկնարկը տրվել է 2011թ. սեպտեմբերի 13-ին, որը կշարունակվի 2012 թվականին: Այս ծրագրի շրջանակներում մայրաքաղաքի կրթական հաստատությունների սաները կայցելեն մշակութային օջախներ՝ թատրոններ, թանգարաններ: ▪քույր քաղաքների կրթական օջախների միջև կապի սերտացման նպատակով կիրականացվեն ծրագրեր, մասնավորապես կստեղծվի «ուղիղ-կապ» Մոնրեալի Ալեք Մանուկյան վարժարանի և Երևանի հ.156 դպրոցի միջև: ▪Թվով 12 նախադպրոցական հաստատությունների հիմնանորոգում և վերանորոգում (577000.0 հազ.դրամ)
Առողջապահություն	
➢ *Շենքային պայմանների և տեխնիկայի մաշվածություն ու բացակայություն* ➢ *տեղեկատվության և փաստաթղթաշրջանառության միասնական համակարգի բացակայություն*	▪Առողջապահության ոլորտի զարգացման գերակա ուղղություն ընդունել հիվանդանոցային և արտահիվանդանոցային ծառայության վիճակի բարելավումը՝ հիմնական շեշտը դնելով մատուցվող ծառայությունների ծավալների ավելացման, նոր բուժծառայությունների ներդրման, ընկերությունների վերազինման և բուժանձնակազմի վերապատրաստման գործընթացի վրա: ▪Շարունակել շենքերի պահպանմանն ու վերականգնմանը ուղղված ընթացիկ հիմնովին վերանորոգման աշխատանքները և ջեռուցման համակարգերի տեղադրումը (272643.5 հազ.դրամ): ▪Սահմանափակ կարողություններով անձանց համար քաղաքապետարանի ենթակայության առողջապահական ընկերություններում կառուցվելու են թեքահարթակներ, պոլիկլինիկաների առաջին հարկերում առանձնացվելու են սենյակներ, որտեղ բուժանձնակազմի կողմից կիրականացվի հաշմանդամների բուժսպասարկումը: ▪Ավարտվելու է «Քանաքեռ-Զեյթուն» ՓԲԸ վերակազմակերպման գործընթացը, արդյունքում ստեղծվելու են «Դավիթ Անհաղթ» ԲԿ, «Նոր Արաբկիր» առողջության կենտրոն», «Զեյթուն պոլիկլինիկա», «Արաբկիր մանկական պոլիկլինիկա», «Ն.Բ.Հակոբյանի անվան ընդհանուր հիգիենայի և մասնագիտական հիվանդությունների ԳՀԻ» առանձնացված ՓԲԸ-երը: ▪Երևանի բուժհիմնարկների գործունեության հսկողության արդյունավետության բարձրացման և աշխատանքների գնահատման նպատակով նախատեսվում է ստեղծել տվյալների ավտոմատացված շտեմարան: ▪Շարունակական բնույթ է կրելու ԶԼՄ–ների միջոցով հանրության իրազեկումը հիվանդությունների կանխարգելման նպատակով:

Սոցիալական ապահովություն	
➢ *պետական և ընտանեկան նպաստների համակարգի ոչ բավարար մակարդակ* ➢ *հաշմանդամների սոցիալական ինտեգրման ծրագրերի ոչ բավարար քանակ։* ➢ *զբաղվածության խնդիրների աստիճանական կարգավորման և գործազրկության մակարդակի նվազում։*	▪ Պետական նպաստների համակարգի կատարելագործում և հասցեականության մեծացում ▪ Պետական բյուջեից հատկացվող ֆինանսական միջոցները առավել արդյունավետ օգտագործելու նպատակով պետք է շարունակական լինի ոչ հավաստի տեղեկատվության հետևանքով նպաստառության իրավունք ձեռք բերած ընտանիքների զտումը համակարգից և քաղաքացիներին ավելի վճարված գումարների ետգանձումը ՀՀ պետբյուջե։ ▪ 2012 ընթացքում Երևան քաղաքում պետական նպաստներից կօգտվեն միջին հաշվով 17000 ընտանիքներ (5.0-5.5 մլրդ դրամ ՀՀ պետ. բյուջե)։ ▪ կենսաթոշակներ կստանան շուրջ 172000 կենսաթոշակառուներ (65000.0 մլն դրամ- ՀՀ պետբյուջեից և սոց հիմնադրամի միջոցներ)։ ▪ Կանանց միջազգային օրվա կապակցությամբ 2012թ. մարտի 8-ին՝ կազմակերպվելու է միջոցառում նվիրված կարիքավորության գնահատման համակարգում հաշվառված և սոցիալական խմբեր ներկայացնող շուրջ 900 կանանց համար (4.0 մլն դրամ)։ ▪ Մայրության օրվա՝ ապրիլի 7-ի կապակցությամբ մայրության խրախուսման նպատակով կազմակերպվելու է միջոցառում մասնակցությամբ 4 և ավելի երեխաներ ունեցող, ինչպես նաև երեխայի սպասող (հղի) մայրերի, որոնց մատուցվելու են նվերներ (4.0 մլն դրամ)։ ▪ Ապրիլի 24-ի կապակցությամբ միանվագ նպաստ կստանան Մեծ եղեռնը վերապրածները (3,0 մլն դրամ)։ ▪ Մայիսի 9-ի կապակցությամբ կազմակերպվելու է միջոցառում՝ նվիրված հաղթանակի օրվան՝ Արցախյան պատերազմի մասնակիցների մասնակցությամբ (5.0 մլն դրամ)։ ▪ Մայիսի 9-ի կապակցությամբ դրամական օժանդակություն կցուցաբերվի վետերանների խորհրդին (1,0 մլն դրամ)։ ▪ Շուշիի ազատագրության օրվա կապակցությամբ օժանդակություն կցուցաբերվի «Կոմանդոս» ջոկատի ազատամարտիրկներին (1.0 մլն դրամ)։ ▪ Տարեցների միջազգային օրվա՝ հոկտեմբերի 1-ի կապակցությամբ նախատեսվող միջոցառման համար անհրաժեշտ է 4.0 մլն դրամ: Նախատեսվում են այցելություններ նաև տարեցների խնամակալական հաստատություններ: ▪ Դեկտեմբերի 3-ին՝ հաշմանդամների միջազգային օրվա կապակցությամբ հաշմանդամների խնդիրներով զբաղվող հասարակական կազմակերպություններին կցուցաբերվի օժանդակություն (1.0 մլն դրամ)։ ▪ Կարիքավորության գնահատման համակարգում ընդգրկված սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների համար Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների կապակցությամբ նախատեսվում են միջոցառումներ (4.0 մլն դրամ)։

	▪ Սոցիալական կարիքի մեջ գտնվող քաղաքացիներին կցուցաբերվի դրամական օժանդակություն (16.0 մլն դրամ): ▪ Դրամական օժանդակություններ սոցիալական գործընկեր ՀԿ-ներին՝ համատեղ ծրագրերի իրականացմնա նպատակով (6.0 մլն դրամ): ▪ Հ. Պարոնյանի, Գ. Սունդուկյանի, Ստանիսլավսկու անվան թատրոնների հետ համատեղ կիրականացվեն կարիքավորության գնահատման համակարգում հաշվառված անձանց անվճար թատերական ներկայացումներին մասնակից դարձնելու ծրագիրը: ▪ Սոցիալապես անապահով երեխաների հանգստի կազմակերպում (3065.0 հազ.դրամ)
Երեխաների իրավունքների պաշտպանություն	
➢ *սոցիալական բոլոր խմբերի վերաբերյալ միասնական տեղեկատվական–վերլուծական բազայի բացակայություն* ➢ *գենդերային հիմնախնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի պակաս* ➢ *պետպատվերի շրջանակում խոցելի խմբերին տրամադրվող ամբուլատոր–պոլիկլինիկական ծառայությունների քանակի ավելացման խնդիր (կարիք)*	▪ Կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող երեխաներին ուղղված բազմամասնագիտական ծառայությունների զարգացում, տարբեր ծառայություններ մատուցող կազմակերպությունների, սոցիալական հոգածության ցերեկային կենտրոնների ցանցի ընդլայնում: ▪ Ամբուլատոր–պոլիկլինիկական ծառայությունների և պետպատվերի շրջանակներում խոցելի խմբերին տրամադրվող ծառայությունների քանակի ավելացում: ▪ Խնամակալության և հոգաբարձության մարմինների, բուժհաստատությունների և շահագրգիռ այլ կառույցների հետ համատեղ միջոցառումների իրականացում՝ մանկալքության դեպքերը կանխելու համար: ▪ Հանրակրթական դպրոցներում, երեխաների խնամքի և պաշտպանության հաստատություններում թրաֆիկինգի, թմրամոլության հետևանքների, առողջ ապրելակերպի, գենդերային հավասարության վերաբերյալ սեմինարների կազմակերպում: ▪ Միջազգային և տեղական հասարակական կառույցների ու կազմակերպությունների հետ համատեղ ընտանիքի, կանանց և երեխաների հիմնախնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի մշակում, միջոցառումների իրականացում:
Մշակույթ	
➢ *մշակութային օջախների տեղեկատվական-հաղորդակցական, նոր տեխնոլոգիաների և էլեկտրոնային կառավարման համակարգերի ոչ բավարար մակարդակ* ➢ *մշակութային օջախների անբարեկարգ վիճակը*	▪ Կավարտվեն ջեռուցման խնդիր ունեցող երաժշտական և արվեստի դպրոցներում ջեռուցման համակարգերի տեղադրման աշխատանքները (50000.0 հազ.դրամ): ▪ «Զեյթուն մշակութային կենտրոն» ՀՈԱԿ-ի հիմնանորոգման աշխատանքներ (88078.0 հազ.դրամ) ▪ Մշակութային միջոցառումների իրականացում (382390.0 հազ. դրամ): ▪ 2012թ. Յունեսկոյի կողմից Երևանը գրքի համաշխարհային մայրաքաղաք հռչակվելու և հայկական գրատպության 500-ամյակի կապակցությամբ տարվա ընթացքում նախատեսվում է իրականացնել մի շարք միջոցառումներ (6000.0 հազ.դրամ): ▪ Մշակութային կազմակերպություններում կկազմակերպվեն Ֆրանկոֆոնիայի միջազգային օրեր

	Երևանում: ▪ Կմշակվի Երևանի քաղաքապետարանի գրադարանային համակարգի ռազմավարությունը: ▪ Երևանի կենդանաբանական այգում կիրականացվեն մի շարք ծրագրեր և միջոցառումներ՝ ուղղված կենդանիների կեցության պայմանների բարելավմանը: Կենդանաբանական այգու պահպանման համար նախատեսված է 194637.7 հազ. դրամ սուբվենցիա (ՀՀ պետբյուջե): ▪ Երևանի քաղաքապետարանի թանգարանների պահպանման համար ՀՀ պետբյուջեից կտրամադրվի 193656.1 հազ. դրամ սուբվենցիա, թատրոնների համար՝ 236016.8 հազ. դրամ սուբվենցիա: ▪ Երևանի քույր և գործընկեր քաղաքների հետ համատեղ կիրականացվեն մշակութային ծրագրեր՝ քարոզելով հայկական մշակույթը, որը կստեղծի և կամրապնդի համագործակցության նոր շրջանակներ: ▪ Կենդանաբանական այգու հիմնանորոգման իրականացում Երևանի բյուջեի (50000.0 հազ.դրամ) և մասնավոր ներդրումների հաշվին (50000.0 հազ.դրամ)
Ֆիզիկական կուլտուրա և սպորտ	
➢ *մարզադպրոցներում մարզաբազաների անմխիթար վիճակ կամ բացակայություն:*	▪ Հրազդանի կիրճում մարզաառողջարարական երիտասարդական համալիր կենտրոնի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի պատրաստում (ծրագիրն ընդգրկված է Երևանի Գլխավոր հատակագծում): ▪ «Հրազդան» մարզադաշտում աթլետիկական համալիրի կառուցման և մայրաքաղաքում մասնագիտացված միակ աթլետիկական կառույցի՝ «Սպարտակ» մարզադաշտի, վերանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի պատրաստում: ▪ Սպորտային միջոցառումների իրականացում (84675.8 հազ.դրամ):
Երիտասարդության հետ տարվող աշխատանքներ	
➢ *երիտասարդական հասարակական կազմակերպությունների, հաշմանդամ երիտասարդներին աջակցող կազմակերպությունների հետ համագործակցության ցածր մակարդակ:* ➢ *Երևանի վարչական շրջաններում երիտասարդական կենտրոնների բացակայություն:*	▪ Երիտասարդների իրավաքաղաքական իրազեկվածության, աշխատանքային, սոցիալական խնդիրների ուսումնասիրման նպատակով աշխատանքային խմբերի ստեղծում: ▪ Հաշմանդամ երիտասարդներին աջակցող կազմակերպությունների հետ ստեղծագործական ցուցահանդեսների կազմակերպում: ▪ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, թմրամոլության մասին երիտասարդների իրազեկության ապահովման և կանխարգելման նպատակով զանգվածային միջոցառումների կազմակերպում: ▪ Ամերիկայի հայկական համագումարի ամառային ծրագրի մասնակից սփյուռքահայ ուսանողների համար երկամսյա երիտասարդական միջոցառումների կազմակերպում: ▪ Երևանի, քույր քաղաքների և Հայաստանի Հանրապետության այլ համայնքների երիտասարդների համատեղ մարզամշակութային միջոցառումների կազմակերպում: ▪ Ինովացիոն ծրագրի մշակման և նախապատրաստական աշխատանքների կազմակերպում: Ծրագրի

	նպատակը՝ Երևանում երիտասարդական թաղամասի կառուցումն է, երիտասարդ բնակիչների աշխատուժի օգտագործմամբ: Ծրագրի իրականացումը կընթանա փուլերով, առաջին փուլում՝ նախատեսվում է տարածքի հատկացման, ֆինանսական աղբյուրների և կազմակերպչական այլ հարցերի վերաբերյալ քննարկումներ, թաղամասի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում:
Տուրիզմ	
➢ *զբոսաշրջային ենթակառուցվածքների թերի զարգացած լինելը* ➢ *հանգստի գոտիների ոչ պատշաճ մակարդակը* ➢ *տուրիստական քարտեզների բացակայությունը* ➢ *մշակութային միջոցառումների կազմակերպման և տարածման մասին տեղեկատվության պակաս* ➢ *մայրաքաղաքում զբոսաշրջիկների ինքնակողմնորոշման հնարավորությունների բացակայություն* ➢ *մայրաքաղաքում տեղեկատվական կետերի /i-pointe-երի/ բացակայություն* ➢ *Երևանը Հայաստանի սահմաններից դուրս պատշաճ ներկայացման բացակայություն*	▪ Երևան քաղաքի զբոսաշրջային գլխավոր պլանի (Master Plan-ի) մշակում ▪ Գովազդային արշավի կազմակերպում այնպիսի հեղինակային ամսագրերում, ինչպիսիք են՝ National Geographic, Traveler, Forbes և այլն, ինչպես նաև Երևանի մասին գովազդային հոլովակի պատվիրում և տարածում խոշոր հեռուստաալիքներով (CNN, Euronews, National Geographic): ▪ Երևան քաղաքի զբոսաշրջային քարտեզի տպագրում և տարածում թիրախային կետերում (օդանավակայան, հյուրանոցներ, դեսպանատներ, սրճարաններ, ռեստորաններ և այլն); ▪ Երևան քաղաքի իմիջային և երիտասարդական ուղեգրքերի տպագրում: ▪ «Երևան Սիթի Տուր» զբոսաշրջային ծրագրի շարունակական իրականացում:

ԵՐԵՎԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐ

Աջափնյակ վարչական շրջան	
Կրթություն, մշակույթ, սպորտ ➢ *հիմնանորոգման կարիք ունեն հ.հ. 36, 39, 40, 41, 43, 44, 48, նուիերը:* ➢ *վերանորոգման կարիք ունեն թվով 14 /հ.հ. 35, 36, 37, 38, 39 40, 41, 42, 44, 45, 46, 47, 48, 49/ նուիեր, «Աջափնյակ» գեղագիտական դաստիա-րակության կենտրոնը և գրադարանային կենտ-րոնացված համակարգը:* ➢ *Մշակութային հիմնարկներում Ա.Գաբրիելյա-նի անվան արվեստի դպրոցում, գրադարանային կենտրոնացված համակարգում, Մանկապատա-նեկան տեխնիկական ստեղծագործության կենտ-րոնում կա հիմնանորոգման, լոկալ ջեռուցման առանձին համակարգի անցկացման կարիք:* ➢ *«Աջափնյակ» գեղագիտական դաստիարակու-թյան կենտրոնը, Մ.Միրզոյանի, Ա.Ցիցիկյանի անվան երաժշտական դպրոցները, հ.հ. 44, 46, 48, 49 նուհ-երը ջեռուցվում են համատեղ, ունեն ջե-ռուցման համակարգի առանձնացման խնդիր:* ➢ *Մարզադպրոցը չունի դահլիճ, շենքային պայ-մաններն անբավարար են, բացակայում է կենտ-րոնական ջեռուցում:* ➢ *Հ.հ. 37, 39 և 48 նուհերը կարիք ունեն ոռոգման ցանցի անցկացման: Մասնակի վերանորոգման անհրաժեշտություն կա հ.հ. 35, 36, 38, 39, 40, 41, 42, 43, 44, 46, 47, 48, 49 նուհերի ոռոգման ցանցերում:* ***Առողջապահություն և սոցիալական ապահովություն*** ➢ *սոցիալապես անապահով ընտանիքների սո-ցիալական, բնակարանային-կոմունալ խնդիր-ների առկայություն:*	***Կրթություն, մշակույթ, սպորտ*** ▪ Կիրականացվեն մշակութային և թվով 7 սպորտային միջոցառումներ: ***Առողջապահություն և սոցիալական ապահովություն*** ▪ Կշարունակվի սոցիալապես անապահով բնակիչներին պետպատվերի շրջանակում իրականացվող բուժսպասարկման աջակցությունը: ▪ հասարակական կազմակերպությունների հետ համատեղ կիրականացվի տարատեսակ սոցիալական ծրագրեր՝ ի նպաստ սոցիալապես խոցելի խմբերի, մասնավորապես, ուղղված Աջափնյակ վարչական շրջանում գործող բարեգործական ճաշարանի շահառուների, ինչպես նաև սոցիալապես անապահով ընտանիքների սոցիալական խնդիրների լուծմանը և բարելավմանը: ▪ Կիրականացվի «Երբ գալիս է սեպտեմբերը» ծրագիրը՝ վարչական շրջանի սոցիալապես անապահով ընտանիքների դպրոցահասակ երեխաներին աջակցելու համար: Ֆինանսական աջակցություն կհատկացվի սոցիալապես առավել կարիքավոր ընտանիքներին: Ամանորյա տոների կապակցությամբ վարչական շրջանի առավել կարիքավոր ընտանիքներին կհատկացվեն սննդի փաթեթներ: ***Բնակարանային-կոմունալ տնտեսություն*** ▪ բակային տարածքներում նախատեսվել է տեղադրել 19 լրակազմ մանկական խաղ և 10 լրակազմ մարզասարք: ▪ Հալաբյան 13, 15, 21, 23, 25, 35, 37, 39 շենքերի բակի, Շինարարների 14, 16, 18 շենքերի բակի այգիներում կանցկացվի լուսավորության ցանց: ▪ Նախատեսվում է Հալաբյան-Մարգարյան փողոցների խաչմերուկին հարող 16013 քմ մակերեսով հանգստի գոտու տարածքում հիմնել փոքր կենտրոն: ▪ Ամրացման աշխատանքներ կկատարվեն վարչական շրջանի 3-րդ կարգի վթարային թվով 5 շենքերում՝ Շինարարների 3, 11, 27, Աբելյան 5, Արզումանյան 8Ա հասցեներում: ▪ Նախատեսվում է Հալաբյան-Լենինգրադյան փողոցների խաչմերուկում գտնվող ստորգետնյա գետնանցումի ամրացման և վերանորոգման աշխատանքներ: ▪ Կվերանորոգվեն բազմաբնակարան բնակելի շենքերի 14000 քմ. թեք և 14000 քմ. հարթ տանիքներ: Կվերանորոգվեն թվով 20 շքապատշգամբներ: ▪ Կկառուցվեն թվով 4 այգիներ հետևյալ հասցեներում՝ Նազարբեկյան թաղ. 11, 12 շենքերի բակ, Լենինգրադյան 40, 40Ա շենքերի բակ, Բաշինջաղյան 175 շենքի բակ և Շինարարների 6 շենքի բակ: ▪ Կիրականացվեն փողոցների երթևեկելի մայթերի և բնակելի շենքերի բակային տարածքների ասֆալտե

Բնակարանային-կոմունալ տնտեսություն ➢ *4-րդ և 3-րդ կարգի վթարային շենքերի առկայություն։* ➢ *շենքերի խմելու ջրի և կոյուղու ջրագծերի վատթար վիճակ,* ➢ *գազաֆիկացման և լուսավորության ցանցի մաշվածություն կամ բացակայություն* ***Բնապահպանություն*** ➢ *կանաչ տարածքների անբավարար քանակ* ➢ *ոռոգման ջրագծերի վատթար վիճակ։* ***Առևտուր և սպասարկում*** ➢ *գյուղատնտեսական մթերքների շուկայի և առևտրա-արդյունաբերական ապրանքների տոնավաճառի բացակայություն։*	ծածկույթի ընթացիկ և կապիտալ վերանորոգման և պահպանման աշխատանքներ (12000 քմ), Չառուշի փողոցի եզրաքարերի շարում և մայթի կառուցում, Շինարարների փողոցի սկզբնամասում /Լենինգրադյան-Արզումանյան փողոց/ եզրաքարերի կառուցում, Սիլիկյան թաղամաս ճանապարհի կառուցում, Լենինգրադյան և Հալաբյան փողոցների հենապատի վերականգնում։ ▪ Վարչական շրջանում՝ Լենինգրադյան և Հալաբյան փողոցներում կկառուցվեն վերգետնյա անցումներ։ ***Բնապահպանություն*** ▪ Նախատեսվում է ընդարձակել կանաչ տարածքները, մասնավորապես, ծրագրավորված է խիտ բնակեցված թաղամասերում բակային այգիների վերանորոգում, գազոնային տարածքի վերականգնում և ծաղկային տարածության ընդարձակում։ Նախատեսվում է նաև չոր ծառերի հատում։ Սիզամարգերի մակերեսը կհասցվի 23 հա, նոր ոռոգման ջրագծերը կկազմեն 5060 գծմ։
Ավան վարչական շրջան	
Կրթություն, մշակույթ, սպորտ ➢ *շախմատի մարզադպրոցում, գրադարանում և մարզադպրոցում ջեռուցման համակարգի բացակայություն։* ***Բնապահպանություն*** ➢ *ոռոգման ցանցի անբավարար վիճակ։*	***Կրթություն, մշակույթ, սպորտ*** ▪ Կիրականացվեն 13 մշակութային (31.000.000 դրամ) և թվով 7 սպորտային միջոցառումներ (3.000.000 դրամ)։ ***Բնակարանային և կոմունալ տնտեսություն*** ▪ Ավան-Առինջի 2-րդ մկշ. 1/11-1/12 շենքերի բակային տարածքում և Թումանյան թաղամասում նախատեսվում է իրականացնել արտաքին լուսավորության անցկացման աշխատանքներ։ ▪ 17 հասցեների բակային հատվածներում կտեղադրվեն մանկական 78 խաղ (34 ՝ դրամ)։ ▪ սանիտարական մաքրման աշխատանքների (ընդհանուր մակերեսը՝ 720.0 հազ. քմ) կազմակերպման համար կհատկացվի 180000.0 հազ.դրամ։ ▪ կիրականացվեն խաղահրապարակների, զբոսայգիների, բակերի, աստիճանավանդակների, բազրիքների ընթացիկ վերանորոգման աշխատանքներ (34000.0 հազ.դրամ)։ ▪ կվերանորոգվեն 5000 քմ ընդհանուր մակերեսով հարթ տանիքներ (16000.0 հազ.դրամ)։ ▪ կվերանորոգեն 1 բեռնատար և 10 մարդատար վերելակներ (8000.0 հազ.դրամ)։ ***Բնապահպանություն*** ▪ կանաչ տարածքների պահպանման աշխատանքները կազմակերպելու համար անհրաժեշտ է 86600.0

	հազ. դրամ:
Արաբկիր վարչական շրջան	
Կրթություն, մշակույթ և սպորտ ➢ *Գրադարանների ոչ բարվոք վիճակ* ➢ *նուհերում տանիքների և սանհանգույցի անմխիթար վիճակ:* ***Բնակարանային-կոմունալ տնտեսություն*** ➢ *փողոցների և բակերի արտաքին լուսավորու-թյան ցանցի անբավարար մակարդակ* ➢ *եզրաքարերի, փողոցների ու մայթերի ասֆալտբետոնե ծածկի վերանորոգման անհրաժեշտություն* ➢ *հարթ և թեք տանիքների անմխիթար վիճակ:* ***Բնապահպանություն*** ➢ *կանաչապատ տարածքների անբավարար քանակ:*	***Կրթություն, մշակույթ և սպորտ*** ▪ նախատեսված է 12 նուհերի ընթացիկ նորոգում (12000.0 հազ. դրամ): ▪ կիրականացվեն մշակութային (16000.0 հազ. դրամ) և սպորտային միջոցառումներ (7888.8 հազ. դրամ): ***Սոցիալական ապահովություն և առողջապահություն*** ▪ աջակցություն կցուցաբերվի կարիքավոր ընտանիքներին, զոհված ազատամարտիկների ընտանիքներին, ծնողազուրկ երեխաներին, հաշմանդամներին, բնակչության սոցիալապես անպաշտպան այլ խավերին (27740.0 հազ. դրամ): ***Բնակարանային-կոմունալ տնտեսություն*** ▪ փոքր կենտրոն կհիմնվի Արաբկիր մանկական զբոսայգում: ▪ կտեղադրվեն թվով 12 բակային խաղեր: ▪ կիրականացվեն համայնքային նշանակության փողոցների երթևեկելի մասերի և մայթերի 15818 քմ և 196 գծմ եզրաքարերի վերանորոգման (5000.0 հազ. դրամ) աշխատանքներ: ▪ կիրականացվեն Հրազդանի կիրճի մաքրման աշխատանքներ (2000.0 հազ. դրամ): ▪ կվերանորոգվի թվով 15 վերելակ (23000.0 հազ. դրամ): ▪ կիրականացվեն 19 հարթ (82964.2 հազ. դրամ) և 4 թեք (40000.0 հազ. դրամ) տանիքների, 18 բակային տարածքների (120000.0 հազ. դրամ), խաղահրապարակների և բազմաբնակարան շենքերի 50 մուտքերի (60000.0 հազ. դրամ) վերանորոգման աշխատանքներ: ***Բնապահպանություն*** ▪ խիտ բնակեցված թաղամասերում կստեղծվեն նոր այգիներ, պուրակներ, սիզամարգերի տարածքներ, 53 հա կանաչ տարածքի պահպանում (140000.0 հազ. դրամ): ▪ իրականացվելու է 1653.0 քմ տարածքի աղբահանում (392500.0 հազ. դրամ): ***Առևտուր և սպասարկում*** ▪ նախատեսվում է Արաբկիր վարչական շրջանի տարբեր փողոցների ճարտարապետական նորմերին համապատասխան վայրերում կազմակերպել մինի շուկաներ՝ տեղադրելով թեթև կոնստրուկտիվ էլեմենտներով բացօթյա տաղավարներ, փողոցի կողմից գովազդային վահանակներով երեսպատված:

Դավթաշեն վարչական շրջան	
Կրթություն, մշակույթ և սպորտ ➢ *մարզամշակութային դպրոցի կառուցման, ֆուտբոլի դաշտերի բարեկարգման անհրաժեշ-տություն կա։* ➢ *հիմնանորոգման խնդիր ունեն հ.հ. 58, 61, 62 նուիերը, տանիքների նորոգման՝ հ.հ. 59, 61, սան-հանգույցների վերանորոգման՝ հ.հ. 58, 60, 62։* ***Առողջապահություն և սոցիալական ապահովություն*** ➢ *բժշկական կենտրոնի շենքի վերանորոգման և բժշկական սարքավորումներով վերազինման անհրաժեշտություն։* ➢ *պետպատվերի շրջանակում սրտանոթային կամ բարդ հիվանդությունների վիրահատու-թյունների սահմանում խոցելի խմբերի համար։* ***Բնակարանային-կոմունալ տնտեսություն*** ➢ *բազմաբնակարան բնակելի շենքերի նկուղնե-րում ջրամատակարարման և ջրահեռացման ցանցը մաշված է։* ➢ *ստորգետնյա և վերգետնյա հետիոտնային անցումների անբավարար քանակ։* ***Բնապահպանություն*** ➢ *ոռոգման ցանցի բացակայություն կամ անբավարար քանակ։*	***Կրթություն, մշակույթ և սպորտ*** ▪ կիրականացվեն մշակութային (13.0մլն դրամ) և սպորտային միջոցառումներ (3.0մլն դրամ)։ ***Առողջապահություն և սոցիալական ապահովություն*** ▪ Կկազմակերպի սոցիալական օգնության ծառայության գործունեությունը։ Նախատեսվում է իրականացնել աշխատանքներ առաջնային օղակում. բնակչության բուժսպասարկումը դարձնել որակյալ, հասանելի և մատչելի, աջակցել կանխարգելիչ և ամբուլատոր բուժօգնության աշխատանքներին։ ▪ Կիրականացվեն պարենային ծրագրի շրջանակներում ամանորյա փաթեթների տրամադրում, Հայրենական պատերազմի 67-ամյակի կապակցությամբ վետերանների մեծարման ցերեկույթ և պարգևատրում (մոտ 5.0մլն դրամ), սոցիալապես անապահով ընտանիքների քարտեզագրում և տվյալների բազայի թարմացում։ ▪ Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին ամառային հանգստի կազմակերպման աշխատանքները 2012թ. շարունակական բնույթ կկրեն (0.5 մլն դրամ)։ Նախատեսվում է գիտելիքի օրվա կապակցությամբ սոցիալապես անապահով դպրոցահասակ երեխաներին տրամադրել դպրոցական պայուսակներ և գրենական պիտույքներ (1.2 մլն դրամ)։ Ֆինանսական աջակցություն կստանան կարիքավոր ընտանիքները առաջնային սոցիալական կամ առողջական խնդիրների լուծման համար (4.8 մլն դրամ)։ ***Բնակարանային-կոմունալ տնտեսություն*** ▪ կիրականացվեն Դավթաշեն վարչական շրջանի 4-րդ թաղ. հ.հ. 20, 21, 22 շենքերի բակում գտնվող այգու կապիտալ վերանորոգման և արտաքին լուսավորության անցկացման աշխատանքները։ ▪ Վարչական շրջանի բակային տարածքներում կտեղադրվեն թվով 25 մանկական խաղեր։ Տվյալ առաջարկին մասնակից է նաև «Փյունիկ» բարեգործական կազմակերպությունը։ ▪ Նախատեսվում է Դավթաշեն վարչական շրջանի 1-ին և 2-րդ թաղամասերի միջնամասում գտնվող այգում հիմնել փոքր կենտրոն։ ▪ Մշակվել է ծրագրային փաթեթ, որի շնորհիվ կստեղծվեն համատիրությունների միավորումներ։ Այն թույլ կտա ժամանակակից խնդիրները լուծել օպտիմալ և արդյունավետ։ Մրցակցության պայմաններում ի հայտ կբերվեն այս կառույցների գործունեության արդյունավետությունը։ Քայլեր կձեռնարկվեն բնակելի ֆոնդի պահպանումն ու շահագործումն ավելի բարձր մակարդակի հասցնելու համար։

	▪ կնորոգվեն բնակելի շենքերի հարթ տանիքները (40.0 մլն դրամ) ▪ կիրականացվեն բակային տարածքների հիմնանորոգման և պահպանման աշխատանքներ (29.0 մլն դրամ): ▪ կսկսվեն Դավթաշեն վարչական շրջանի առաջին և երկրորդ թաղամասերի միջև գտնվող այգում բեմահարթակի և հրապարակի կառուցման աշխատանքները: ▪ նախատեսվում է իրականացնել սեփական սեկտորի անձրևատարի և 2-րդ վերջնամասի հեղեղատարի կառուցումը: ▪ կկառուցվի Սասնա-Ծռեր փողոցը Աղաբաբյան փողոցին միացնող ճանապարհ: Նախատեսվում է կառուցել վերգետնյա անցում: ▪ կապահովվի Փիրումյան, Աղաբաբյան փողոցների և վարչական շրջանի բակային տարածքների արտաքին լուսավորությունը ամբողջությամբ, ինչպես նաև կիրականացվի Դավթաշենի սեփական սեկտորի (գյուղի) 1-ին, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ փողոցների, Դավթաշեն վարչական շրջանի՝ 16-րդ թաղամասի դիմաց, աճուրդային հողակտորների, Ազատամարտիկների, Ձոր-1, Ձոր-2, Ձոր-3 թաղամասերի, 3-րդ թաղամասի մասնավոր սեկտորի արտաքին լուսավորությունը: ▪ Կիրականացվեն փողոցների երթևեկելի հատվածի և մայթերի ասֆալտե ծածկի ընթացիկ և կապիտալ վերանորոգման աշխատանքներ (30.0մլն դրամ), կնորոգվեն փողոցների եզրաքարերը (5.0 մլն դրամ), մայթերի սալահատակը, դիտահորերը, կբարեկարգվեն մայթերին հարող սիզամարգերը: 2-րդ և 1-ին թաղամասերի այգու վերջնամասում նախատեսված է կառուցել ավտոճանապարհ: Վարչական շրջանի 337.8 հազ. քմ աղբահանության համար նախատեսվում է ծախսել 75.0 մլն դրամ: ***Բնապահպանություն*** ▪ կիրականացվի այգու ընթացիկ նորոգում (10.0մլն դրամ): ▪ նախատեսվում է թաղամասերում նոր այգիների ստեղծում, սիզամարգերի տարածքի վերականգնում, ծառատունկ, թփերի տնկում, ծաղկային տարածության ընդարձակում, ծառերի և թփերի բուժում՝ տարեկան 2 անգամ: Նախատեսվում է իրականացնել 18 հա կանաչ գոտու խնամք, բարեկարգում և պահպանում, ոռոգման գործող ցանցի վերանորոգում և ընդլայնում: 18 հա կանաչ տարածքների պահպանության և շահագործման համար նախատեսվում է ծախսել 60.0 մլն դրամ:
Էրեբունի վարչական շրջան	
Կրթություն, մշակույթ, սպորտ ➢ *Մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնի, հ.հ. 65, 69, 71 նուիերի շենքերի, հ.հ. 63, 65, 66, 70, 73, 74, 75 նուիերի տանիքների և հ.հ. 63, 74, 75 նուիերի սանհանգույցների անբարե-կարգ վիճակ:*	***Կրթություն, մշակույթ, սպորտ*** ▪ կիրականացվի 12 մշակութային (19.0 մլն դրամ) և սպորտային 9 միջոցառում (4.5 մլն դրամ)՝ նվիրված տոն և հիշատակի օրերին: ***Առողջապահություն և սոցիալական ապահովություն***

Բնակարանային-կոմունալ տնտեսություն ➢ *ճանապարհային ցանցի անբարեկարգ վիճակ:* ➢ *Փողոցների արտաքին լուսավորության անբավարար մակարդակ:* ***Բնապահպանություն*** ➢ *կանաչ տարածքների սակավություն,* ➢ *ոռոգման ցանցի անբարեկարգ վիճակ:* ***Առևտուր և սպասարկում*** ➢ *Էրեբունու զանգվածում, Վարդաշենում, կայա-ռանամերձ հրապարակի մերձակայքում գյուղ-մթերքների վաճառքի շուկաների բացակայու-թյուն:*	▪նախատեսվում է համագործակցել առողջապահական մարմինների և Կարմիր խաչի ուսումնադաստիարակչական կենտրոնի հետ: Շարունակվելու է «Աճեմյան ատամնաբուժական կլինիկա» բարեգործական ծրագրի շրջանակում վարչական շրջանի սոցիալապես անապահով բնակիչների անվճար բուժօգնությունը: ▪նախատեսվում է առանձնակի ուշադրություն դարձնել բարեգործական ճաշարանի գործարկմանը: Կտրամադրվեն օգնություններ զոհված և վիրավոր ազատամարտիկների ընտանիքներին, բազմազավակ անապահով ընտանիքներին, Հայրենական պատերազմի վետերաններին, միայնակ տարեցներին և բնակչության սոցիալապես անապահով այլ խավերին: Նյութապես կարիքավոր ընտանիքներին բուժման ծախսերի նպատակով և որպես միանվագ օգնություն կտրամադրվի աջակցություն (6 մլն դրամ): ***Բնակարանային-կոմունալ տնտեսություն*** ▪նախատեսվում է բազմաբնակարան շենքերի բակային տարածքներում տեղադրել թվով 20 մանկական խաղ: ▪կբարեկարգվի վարչական շրջանի 6 բակային տարածքներ (60.0 մլն դրամ): ▪կիրականացվեն այգիների և պուրակների լուսավորության ցանցի արդիականացման և անցկացման աշխատանքներ: ▪Կիրականացվեն 11.760 քմ փողոցների և ճանապարհների ասֆալտբետոնե ծածկի վերանորոգման աշխատանքներ (60.0 մլն դրամ): ▪աղբահանման աշխատանքների ծավալը կկազմի 1706.4 քմ (406.1 մլն դրամ): Կիրականացվեն 2528 խմ գետերի հուների մաքրման աշխատանքներ (15.5 մլն դրամ): ▪հուշարձանների վերանորոգման և պահպանման աշխատանքների համար նախատեսվում է 3.0 մլն դրամ: ***Բնապահպանություն*** ▪13.3 հա կանաչ տարածքների պահպանության և շահագործման աշխատանքների իրականացման համար նախատեսվում է 60.0 մլն դրամ:
Կենտրոն վարչական շրջան	
Կրթություն, մշակույթ, սպորտ ➢ *Հ.հ.11,. 2 և 3 նուհերի սանհանգույցների, հ. 19 նուհի տանիքի անմխիթար վիճակ: Հ.14 նուհ-ի հիմնանորոգման և հ.15 նուհ-ի վերանորոգման անհրաժեշտություն: Գույքի բացակայություն:* ➢ *Դպրոցների և նուհերի կանաչ տարածքների*	***Կրթություն, մշակույթ, սպորտ*** ▪կիրականացվի կրթական՝ 9 (15.0 մլն դրամ), մշակութային՝ 16 (22.0 մլն դրամ) և սպորտային 9 միջոցառում (4.0 մլն դրամ): ***Առողջապահություն և սոցիալական ապահովություն*** ▪բնակչության խոցելի խմբերին սոցիալական աջակցություն ցուցաբերելու նպատակով

ոռոգման ցանցի ընդլայնման կարիք կա և կանաչապատման անհրաժեշտություն: ➢ *Խ. Աբովյանի անվան հ.2 դպրոցի և Հ. Կոջոյանի անվան հ. 15 դպրոցի անբարեկարգ վիճակ:* ***Առողջապահություն և սոցիալական ապահովություն*** ➢ *Որոշ բուժհաստատություններում ներքին վերանորոգման, հարակից տարածքների կանաչապատման և ոռոգման խողովակների անցկացման անհրաժեշտություն, ցայտաղբյուր-ների արդիականացում:* ➢ *Անապահով ընտանիքների առանձնատների վթարային վիճակ:* ***Բնակարանային-կոմունալ տնտեսություն*** ➢ *Հեղեղատար և ջրմուղ-կոյուղու առկա ցանցե-րի անբարեկարգ վիճակ, ոռոգման ցանցի բացակայություն:* ➢ *Կարգավորված չէ Մ. Խորենացու փողոցի կամրջից մինչև Նորք-Մարաշ վարչական շրջանի սահման հետիոտնի տեղաշարժը:* ➢ *Շենքերի տանիքների, վերելակների, էլեկտրա-կան մալուխների, փողոցների էլեկտրական փայտե սյուների անմխիթար վիճակ:* ***Բնապահպանություն*** ➢ *Կանաչ և ծաղկապատ տարածքների սակավություն:*	իրականացվելու են շուրջ 80.778 մլն դրամի աշխատանքներ: ▪ նախատեսվում է բացել բարեգործական ճաշարան՝ 200 ծերերի համար (6.0 մլն դրամ): ▪ միանվագ դրամական օգնություն կհատկացվի շրջանի 2220 անապահով ընտանիքների (22.2 մլն դրամ), 1600 անապահով ընտանիքների տարրական դասարանների աշակերտներ կստանան գրենական պիտույքներ և պայուսակներ (5.863 մլն դրամ), 5500 անապահով ընտանիքների կտրամադրվեն ամանորյա նվերներ (24.475 մլն դրամ): Հայրենական մեծ պատերազմի 193 մասնակիցներ կստանան դրամական պարգևատրում (1.93 մլն դրամ): ▪ Առաջին, երկրորդ, երրորդ կարգի թվով 88 զինհաշմանդամների կտրամադրվի մայիսի 9-ի կապակցությամբ դրամական պարգևատրում (0.880 մլն դրամ): ▪ «Սուրբ Հարության» տոնի կապակցությամբ թվով 1000 սոցիալապես անապահով, անժառանգ և միայնակ թոշակառուներին կտրվեն սննդամթերքի փաթեթներ (3.05 մլն դրամ): ▪ Մարտի 8-ի կապակցությամբ թվով 80 զոհված ազատամարտիկների կանանց կտրամադրվեն անկողնային պարագաներ (0.96 մլն դրամ): ▪ Երեխաների պաշտպանության միջազգային օրվա կապակցությամբ շրջանի թվով 400 անապահով ընտանիքների երեխաներին կտրվեն քաղցրավենիքներ (0.96 մլն դրամ): ▪ Հաշմանդամների միջազգային օրվա կապակցությամբ 120 սոցիալապես անապահով հաշմանդամների դրամական աջակցություն կցուցաբերվի (1.2 մլն դրամ): ▪ Տարեցների միջազգային օրվա կապակցությամբ 100 սոցիալապես անապահով թոշակառուների կհատկացվի դրամական օգնություն (1.0 մլն դրամ): ▪ Գերազանց առաջադիմություն ցուցաբերած 10 ուսանողների ուսման վարձի մասնակի փոխանցում (1.0 մլն դրամ): ▪ Նախատեսվում է 400 անապահով անձանց համար գնել բարեգործական բաղնիքի կազմակերպման ծառայություն (5.76 մլն դրամ): ***Բնակարանային-կոմունալ տնտեսություն*** ▪ նախատեսվում է բազմաբնակարան շենքերի բակային տարածքներում տեղադրել թվով 21 մանկական խաղ: ▪ 500 քմ հենապատերի վերանորոգման աշխատանքներ (9.0 մլն դրամ), շենքերի արտաքին լուսավորության և ձևավորման աշխատանքներ (50.0 մլն դրամ): ▪ Բազմաբնակարան շենքերի պահպանման, շահագործման և վերանորոգման համար նախատեսվում է տրամադրել ֆինանսական աջակցություն (սուբսիդիա) համատիրություններին 115.0 մլն դրամի չափով՝ հարթ և թեք տանիքների, ջրթափ խողովակների, կախովի պատշգամբների և շքամուտքերի վերանորոգման աշխատանքների իրականացման համար:

	Բնապահպանության ոլորտ ▪ Գետառի հունի մաքրման աշխատանքների համար կծախսվի 20.0 մլն դրամ: ▪ կիրականացվեն 3162 հազ. քմ սանիտարական մաքրման աշխատանքներ (859.5 մլն դրամ): ▪ 42 հա կանաչ տարածքներում կիրականացվեն ընդլայնման, պահպանման և նոր ոռոգման ցանցերի անցկացման աշխատանքներ (270.0 մլն դրամ):
Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան	
Կրթություն, մշակույթ, սպորտ ➢ *Նուհերի և մշակութային այլ օջախների, մարզադպրոցի անմխիթար վիճակ:* ➢ *Կրթական հաստատությունների բակերի բարեկարգման, ոռոգման ցանցի ստեղծման և տանիքների վերանորոգման անհրաժեշտություն:* ***Բնակարանային-կոմունալ տնտեսություն*** ➢ *Բակային տարածքների բարեկարգման անհրաժեշտություն:* ➢ *Միջբակային տարածքների ասֆալտապատ-ման անհրաժեշտություն:* ➢ *Կոյուղատար ցանցի վերանորոգման կարիք:* ***Բնապահպանություն*** ➢ *Առկա կանաչ տարածքների ու այգիների ոռոգ-ման ցանցի վերականգման, արդիականացման անհրաժեշտություն:* ***Առևտուր և սպասարկում*** ➢ *Առևտրի և սպասարկումների օբյեկտների տեղաբաշխման կարգավորման անհրաժեշտու-թյուն:*	***Կրթություն, մշակույթ, սպորտ*** ▪ կիրականացվեն մի շարք միջոցառումներ՝ նվիրված տոն և հիշատակի օրերին: Կկազմակերպվի օլիմպիադա, դպրոցական քաղաքային 20-րդ մարզական խաղեր, ՀՀ Ազգային ժողովի գավաթի խաղարկություն, «Առողջ սերունդ՝ պաշտպանված հայրենիք» համաքաղաքային բակային փառատոն և այլ միջոցառումներ: ***Առողջապահություն և սոցիալական ապահովություն*** ▪ Սոցիալապես անապահով ընտանիքներին կտրամադրվեն օգնություններ՝ դրամական և սննդամթերքի տեսքով: ▪ Կտրամադրվեն միջնորդագրեր՝ բուժումը պետպատվերի շրջանակներում կազմակերպելու, ինչպես նաև անվճար ստոմատոլոգիական բուժում ստանալու համար: ***Բնակարանային-կոմունալ տնտեսություն*** ▪ նախատեսվում է բարեկարգել 4 բակ, ինչպես նաև Շերամի փող. հ 109 շենքի դիմացի Բ-2 թաղ. հ.24 շենքի հարակից տարածքները: ▪ 9 այգիներում արտաքին լուսավորության անցկացման համար կտեղադրվի 92 հատ հենասյուն: ▪ կկառուցվի մանկական խաղահրապարակ «Մայրության» այգում: կտեղադրվեն թվով 20 մանկական խաղեր: ▪ նախատեսվում է կահավորել «Հաղթանակ» թաղամասի կանգառասրահները ▪ նախատեսվում է իրականացնել բազմաբնակարան շենքերի 6500 քմ հարթ տանիքների վերանորոգում և աջակցություն համատիրություններին: ▪ կիրականացվեն փողոցների, բակերի, միջբակային տարածքների սանմաքրման, 7272 քմ ճանապարհների ասֆալտբետոնե ծածկի վերանորոգման և 800 գծմ եզրաքարերի վերանորոգման աշխատանքներ: ▪ նախատեսվում է վերանորոգել Վ. Զատիկյանի անվան այգու վերնամասի հետիոտնային անցումը (200 քմ տարածք), բակային և միջբակային աստիճանավանդակները (15 հատ):

	▪ շենքերի բակերի համար ձեռք կբերվեն աղբամաններ (100 հատ), նստարաններ (100 հատ) ▪ կանաչ տարածքների պահպանման և խնամքի համար նախատեսված է 152.4 մլն դրամ: ***Բնապահպանություն*** ▪ Կընդլայնվի Իսակովի և Բաբաջանյան փողոցների հարող կանաչապատ տարածքը, ամբողջությամբ կընդլայնվեն և կկանաչապատվեն Բաբաջանյան փողոցի մեջտեղում գտնվող սիզամարգերը: ▪ Նախատեսվել է 77 հա կանաչ տարածքների պահպանման ու շահագործման աշխատանքներ:
Նոր Նորք վարչական շրջան	
Կրթություն, մշակույթ, սպորտ ➢ *նուհերում հիմնանորոգման, տանիքների և սանհանգույցների անմխիթար վիճակ:* ➢ *Շենքերի մեծ մասում հիմնանորոգման և ջեռուցման համակարգերի բացակայություն:* ***Առողջապահություն և սոցիալական ապահովություն*** ➢ *Վարչական շրջանի սոցիալապես անապահով ընտանիքների, փախստականների բնակարանային-կոմունալ, կենցաղային պայմանների բարելավման անհրաժեշտություն:* ***Բնակարանային-կոմունալ տնտեսություն*** ➢ *Նոր Նորքի Ջուղայի 5 հասցեում գտնվող 4-րդ կարգի վթարային շենքը ապօրինի վերաբնակեցրած բնակիչների տեղահանման և շենքի քանդման անհրաժեշտություն: Անհատական բնակարանային շինարարության գործընթացի կազմակերպման անհրաժեշտություն:* ***Բնապահպանություն*** ➢ *Կանաչ տարածքների ընդլայնման, ոռոգման ցանցի ընդարձակման և ջրագծերի հիմնական վերանորոգման անհրաժեշտություն:*	***Կրթություն, մշակույթ, սպորտ*** ▪ Իրականացվելու է թվով 18 մշակութային և 7 սպորտային միջոցառումներ՝ նվիրված տոն և հիշատակի օրերին: ▪ Նոր-Նորք վարչական շրջանի Ֆրիտյոֆ Նանսենի անվան զբոսայգում նախատեսվում է կառուցել ցուցասրահ համանուն հուշաքարերի հարևանությամբ ***Առողջապահություն և սոցիալական ապահովություն*** ▪ Իրականացվելու է հ.22 պոլիկլինիկայի և հ.5 բուժսանմասի սպասարկող բնակչության մեջ սրտի արատով հիվանդների ցուցակների ճշտման և նրանց անվճար դեղորայքով ապահովելու միջոցառումներ: Նմանատիպ միջոցառում պետք է իրականացվի նաև պարբերական հիվանդությամբ (երևանյան) տառապող հիվանդների համար: ▪ Սոց. ապահովության բնագավառում կիրականացվեն թվով 15 միջոցառում՝ նվիրված տոն և հիշատակի օրերին: ***Բնակարանային-կոմունալ տնտեսություն*** ▪ Փոքր կենտրոն ստեղծելու նպատակով ընտրվել է Գայի արձանի պուրակը և հարակից տարածքը՝ 12500 քմ ընդհանուր մակերեսով: ▪ Հայկի արձանի և 9-րդ զանգ. 101 շենքի հարակից այգիներում կանցկացվեն արտաքին լուսավորության ցանց, իսկ Տիգրան Մեծի, Ազատամարտիկների և շատրվանների հարակից այգիներում կիրականացվեն լուսավորման ցանցի վերանորոգման և վերականգնման աշխատանքներ: ▪ Կիրականացվի 95 մանկական խաղերի (2.5 մլն դրամ), զրուցարանների և մետաղական նստարանների տեղադրման աշխատանքներ: ▪ Կիրականացվի փողոցների, մայթերի, հրապարակների և զազոնների ամենօրյա սանմաքրման աշխատանքներ՝ 1.2 մլն քմ ընդհանուր մակերեսով: ▪ Վարչական շրջանի փողոցների երթևեկելի մասի և մայթերի, բնակելի շենքերի բակային տարածքների ասֆալտբետոնե ծածկի ընթացիկ և հիմնական նորոգման աշխատանքներ՝ մոտ 7272 քմ:

	▪ Կիրականացվի նաև թվով 13 վերելակների հիմնանորոգման աշխատանքներ: ▪ Կմաքրվի և կբարեկարգվի Գետառ և Ջրվեժ գետերի հուները: ▪ Կհիմնանորոգվի 7-րդ զանգ. հարևանությամբ գտնվող սպորտ հրապարակը, 6-րդ զանգ. Լյուքսեմբուրգի 5 շենքի բակի, 8-րդ զանգ. 28 և 29 շենքերի միջև գտնվող աստիճանները, 6-րդ զանգ. Լյուքսեմբուրգի 15 շենքի դիմացի եզրաքարերը: Կվերանորոգվեն վարչական շրջանի տարածքում գտնվող թվով 6 ֆուտբոլի մինի դաշտեր: ▪ Կվերականգնվի Տորք-Անգեղ արձանի պղնձե հատվածները և կբարեկարգվի շրջակայքը: ***Բնապահպանություն*** ▪ Նախատեսվում է ընդարձակել կանաչ տարածքները: ▪ Կիրականացվեն 37.58 հա կանաչ տարածքների պահպանման աշխատանքներ:
Նորք-Մարաշ վարչական շրջան	
Կրթություն, մշակույթ, սպորտ ➢ *կրթական հաստատությունների մարզադպրոցների և երաժշտական դպրոցի անմխիթար վիճակ:* ***Առողջապահություն և սոցիալական ապահովություն*** ➢ *հ.5 պոլիկլինիկան ունի հիմնանորոգման և նոր բուժ սպասարկման տեխնիկայով վերազին-ման կարիք:* ***Բնակարանային-կոմունալ տնտեսություն*** ➢ *Միասնական և ամբողջական ոռոգման ցանցի բացակայություն:* ➢ *Երկրորդական փողոցների արտաքին լուսավորության ցանցի հիմնանորոգման անհրաժեշտություն:* ***Առևտուր և սպասարկում*** ➢ *Առկա առևտրային օբյեկտների (կրպակները) արդիականացման անհրաժեշտություն:*	***Կրթություն, մշակույթ և սպորտ*** ▪ Նախատեսվում է իրականացնել թվով 14 միջոցառում (13.0 մլն դրամ), թվով 18 սպորտային միջոցառում (5.4 մլն դրամ): ***Առողջապահություն և սոցիալական ապահովություն*** ▪ Կիրականացվեն մի շարք ծրագրեր (12.5 մլն դրամ)՝ սոցիալապես խոցելի խավերին օգնություն տրամադրելու ուղղությամբ: Թվով 584 ընտանիքի կտրվեն միանվագ դրամական օգնություններ: ▪ Ամանորյա տոների կապակցությամբ սոցիալապես անապահով թվով 600 ընտանիքներին, վետերաններին և զոհված ազատամարտիկների ընտանիքներին կհատկացվեն օգնություններ բնամթերքի տեսքով: ▪ Թոշակառուներին և հաշմանդամներին, ինչպես նաև սոցիալապես անապահով ընտանիքներին անվճար (պետպատվերով) բուժման համար կտրամադրվեն պետպատվերի շրջանակում միջնորդագրեր: ***Բնակարանային - կոմունալ տնտեսություն*** ▪ բակային տարածքներում 2012 թվականին կտեղադրվեն 4 միավոր մանկական խաղեր (1.18 մլն դրամ): ▪ Սբ. Աստվածածին եկեղեցու տարածքում նախատեսվում է հիմնել Նորք-Մարաշ վարչական շրջանի փոքր կենտրոն: ▪ Նորք-Մարաշ վարչական շրջանում նախատեսվում է իրականացնել ոռոգման ներքին ցանցի (2685 գծմ) պահպանման և շահագործման աշխատանքներ (27.,2 մլն դրամ): Կիրականացվեն աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքներ (53.7 մլն դրամ) ***Բնապահպանություն***

	▪ Կիրականացվի տարածքների կանաչապատում և պահպանում (16.7 մլն դրամ):
Նուբարաշեն վարչական շրջան	
Կրթություն, մշակույթ, սպորտ ➢ *Դպրոցական շենքերի և մարզաբազաների անմիջեթար վիճակ:* ***Առողջապահություն և սոցիալական ապահովություն*** ➢ *Շտապ օգնության մեքենայի բացակայություն:* ***Բնակարանային-կոմունալ տնտեսություն*** ➢ *Սոցիալապես անապահով ընտանիքների բնակարանային-կենցաղային պայմանների անբավարար մակարդակ:* ***Բնապահպանություն*** ➢ *Կանաչ տարածքների ընդլայնման, ոռոգման ցանցի ընդարձակման և ջրագծերի հիմնանորոգ-ման անհրաժեշտություն:* ***Առևտուր և սպասարկում*** ➢ *Գյուղմթերքների արտադրանքի մինի շուկայի բացակայություն:*	***Կրթություն, մշակույթ, սպորտ*** ▪ Նախատեսվում է տոն և հիշատակի օրերին նվիրված միջոցառումներ: ***Առողջապահություն և սոցիալական ապահովություն*** ▪ Կիրականացվի վարչական շրջանում ապրող հաշմանդամների և միայնակ ծերերի հաշվառում: ***Բնակարանային-կոմունալ տնտեսություն*** ▪ Բազմաբնակարան շենքերի բակերում նախատեսվում է տեղադրել թվով 5 մանկական խաղեր: ▪ Կենտրոնական այգում և Նուբարաշեն 11 փողոցին հարող նորաստեղծ այգում նախատեսվում է իրականացնել լուսավորության ցանցի անցկացման և վերանորոգման աշխատանքներ: ▪ Նուբարաշեն 11 փողոցին հարող այգու հարևանությամբ նախատեսվում է կառուցել երկրորդ մինի ֆուտբոլի դաշտը: ▪ «Երևան-Ջուր» ՓԲԸ-ի և միջազգային դոնոր կազմակերպությունների հետ համատեղ կսկսվեն Ա, Բ, Գ, Դ, Ե, Զ և Է թաղամասերի խմելու ջրի մատակարարման համակարգի նորոգման աշխատանքները: ***Բնապահպանություն*** ▪ Նախատեսվում է նոր կանաչ տարածքների հիմնում: Կապահովվի 4,1 հա կանաչ տարածքների խնամքի և սպասարկման աշխատանքների կազմակերպումը, կկատարվի հանգստի գոտում ծառատունկ և կձևավորվի 800 քմ ծաղկային տարածք: ***Առևտուր և սպասարկում*** ▪ Նախատեսվում է կազմակերպել գյուղմթերքների արտադրանքի իրացման մինի շուկա:
Շենգավիթ վարչական շրջան	
	Կրթություն, մշակույթ, սպորտ ▪ Երաժշտական դպրոցներում նախատեսված է իրականացնել ծրագրեր՝ կապ հաստատելով Ֆրանսիայի որևէ քաղաքի երաժշտական դպրոցի հետ, ստեղծել համատեղ փողային նվագախումբ: Ա. Տիգրանյանի անվ. երաժշտ. դպրոցում նախատեսվում է վերանորոգել երկու դահլիճ՝ թատերական և պարային բեմադրությունների համար, ստեղծել ձայնագրման ստուդիա: ▪ Նախատեսվում է իրականացնել մի շարք միջոցառումներ՝ նվիրված տոն և հիշատակի օրերին: ▪ Նախատեսվում է իրականացնել հ.հ. 126, 127, 128, 132, 133, 135, 138, 139, 140, 143 և 144 նուիերի տանիքների մասնակի և ամբողջական վերանորոգում: ▪ Ներքին հարդարման աշխատանքներ կիրականացվեն հ.հ. 127, 132, 138, 143 և 144 նուիերում: Ջրագծի և

	կոյուղագծի մասնակի վերանորոգման աշխատանքներ են նախատեսվում իրականացնել հ.հ. 128, 130, 131, 132, 138 և 143 նուիերում: ▪ Նախատեսվում է ջեռուցել թիվ 5 մշակույթի կենտրոնը, Պատանի ստեղծագործության կենտրոնը և Պատանի տեխնիկների կենտրոնը: ***Առողջապահություն և սոցիալական ապահովություն*** ▪ Սոցիալական խնդիրներ ունեցող, սոցիալապես անապահով ընտանիքներին կցուցաբերվի աջակցություն (8000.0 հազ. դրամ): ▪ Կկազմակերպվի սոցիալապես անապահով, ինչպես նաև պատերազմի մասնակից վետերանների, ազատամարտիկների ընտանիքների երեխաների հանգիստը ճամբարներում (1000.0 հազար դրամ): ▪ Սոցիալական խնդիրներ ունեցող ընտանիքների դպրոցահասակ (1-ին դասարան հաճախող) երեխաներին նոր ուսումնական տարվա կապակցությամբ կտրամադրվեն գրենական պիտույքներ (2000.0 հազ. դրամ): ▪ Կշարունակվի համագործակցությունը «Կյանքի հաց» բարեգործական հասարակական կազմակերպության հետ: ▪ Կանանց տոնի՝ մարտի 8-ի կապակցությամբ բարեգործական ճաշարանում կկազմակերպվի տոնական միջոցառում (500.0 հազ. դրամ): ▪ Վարչական տարածքում բնակվող սոցիալական խնդիրներ ունեցող ընտանիքների երեխաներին կտրվեն ամանորյա նվերներ (2000.0 հազ. դրամ): ▪ Տոն օրերի հետ կապված կտրամադրվի աջակցություն (2390.0 հազ. դրամ): ▪ Տարեցների օրվա՝ հոկտեմբերի 1-ի կապակցությամբ ֆինանսական աջակցություն կտրամադրվի վարչական տարածքում բնակվող տարեցներին (530.0 հազ. դրամ), իսկ հաշմանդամների օրվա կապակցությամբ՝ հիմնականում 1-ին կարգի հաշմանդամներին (500.0 հազ. դրամ): ▪ Ուսուցչի օրվա կապակցությամբ ուսուցիչ վետերաններին կտրամադրվի ֆինանսական աջակցություն (500.0 հազար դրամ): ***Բնակարանային-կոմունալ տնտեսություն*** ▪ Նախատեսվում է Գ. Նժդեհի հրապարակում ստեղծել փոքր կենտրոն: 15 բակային տարածքներում կտեղադրվեն 15 հավաքածու (45-50 հատ) մանկական խաղեր: ▪ Նախատեսվում է իրականացնել «Շողակաթ» հեռուստաընկերության հարակից այգու, Արթուր Կարապետյանի անվան պուրակի և Մովսես Գորգիսյանի անվան այգու լուսավորությունը: ▪ Բազմաբնակարան շենքերի պահպանման համար հարթ տանիքների վերանորոգման նպատակով նախատեսվում է վերանորոգել 2857 քմ հարթ տանիք (10000.0 հազ.դրամ) և թեք տանիքներ(10000.0 հազ. դրամ):

	▪ Կիրականացվեն բազմաբնակարան շենքերի բակերի ասֆալտապատման և վերականգնման աշխատանքներ՝ 3889 քմ (10000.0 հազ. դրամ): ▪ Նախատեսվում է իրականացնել բազմաբնակարան շենքերի բակային տարածքների բարեկարգման աշխատանքներ (50000.0 հազ. դրամ): ▪ Նախատեսվում է իրականացնել (291958.6 հազ. դրամ) սանիտարական մաքրման աշխատանքներ, ընդգրկելով 1167.8 հազ. քմ տարածք: ***Բնապահպանություն*** ▪ Կիրականացվեն վարչական շրջանի 30 հա պուրակների, այգիների, սիզամրգերի խնամքի, բարեկարգման և ընդլայման աշխատանքներ (112000.0 հազ. դրամ): ***Առևտուր և սպասարկում*** ▪ Բացօթյա առևտուրը կանոնակարգելու համար անհրաժեշտ է առևտուրը կկազմակերպվի մինի շուկաներում՝ մասնավորապես Շիրակի 5-րդ նրբ. 1-ին շենքի հարակից տարածքում:
Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան	
Կրթություն, մշակույթ, սպորտ ➢ *Նուհերում առկա է տանիքների վերանորոգ-ման և սանհանգույցների հիմնանորոգման խնդիրներ:* ***Առողջապահություն և սոցիալական ապահովություն*** ➢ *սոցիալապես անապահով խավի, ազատա-մարտիկների, վետերանների, թոշակառուների, բազմազավակ ընտանիքների սոցիալական պայմանների անբավարար մակարդակ:* ***Բնակարանային-կոմունալ տնտեսություն*** ➢ *Փողոցների և բակային տարածքների, բնակա-բանային ֆոնդի ոչ բարվոք վիճակ:*	***Կրթություն, մշակույթ և սպորտ*** ▪ նախատեսվում են կազմակերպել և իրականացնել ՀՀ տոն ու հիշատակի օրերին նվիրված միջոցառումներ: Կիրականացվեն նաև մարզական միջոցառումներ՝ կապված ՀՀ Ազգային ժողովի գավաթի խաղարկության հետ, ՀՀ Անկախության 21-րդ տարեդարձի և այլն: ▪ Նախատեսվում է իրականացնել վարչական շրջանի նուհերի հիմնանորոգման և մասնակի վերանորոգման աշխատանքներ: ***Առողջապահություն և սոցիալական ապահովություն*** ▪ Կիրականացվի սոցիալապես անապահով ընտանիքներին աջակցություն: ▪ Գերմանական Կարմիր Խաչի, «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ի և Արաբկիրի հայորդյաց տան հետ համագործակցությամբ կշարունակի բարեգործական ճաշարանների գործարկման ծրագիրը: Կկազմակերպվի բարեգործական բաղնիք ծրագիրը: ▪ ՀՀ տոն և հիշատակի օրերի կապակցությամբ դրամական աջակցություն կցուցաբերվի (ՀՄՊ վետերաններ, վիրավոր և զոհված ազատամարտիկների ընտանիքներ, տարեցներ), կտրամադրվեն սննդի փաթեթներ: ▪ Կկազմակերպվեն սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների ամառային հանգստը հանրապետության ճամբարներում, ինչպես նաև նոր ուսումնական տարվա կապակցությամբ կտրամադրվեն դպրոցական պիտույքներ: ▪ Կշարունակվի սոցիալապես առավել կարիքավոր բնակիչներին պետպատվերի շրջանակներում

	իրականացվող բուժսպասարկման աջակցությունը (տարբեր տեսակի վիրահատություններ և բուժում), ինչպես նաև կիրականացվի «Աճեմյան» ատամնաբուժական կլինիկայի բարեգործական ծրագիրը: ▪ Նախատեսվում է խոշոր առևտրային կազմակերպությունների միջոցով իրականացնել պարենային ծրագիր՝ սննդամթերք ձեռք բերելու համար (բացի ծխախոտից և ոգելից խմիչքից) սոցիալապես անապահով, բազմազավակ, միակողմանի և երկկողմանի ծնողազուրկ երեխաների, ընտանիքներին բոնուս քարտերի տրամադրում: ▪ Երեխաների հանգիստը կազմակերպելու համար վարչական շրջանում գործող ՀԿ-ների հետ համատեղ դպրոցներին կից կկազմակերպվեն բակային ճամբարներ: Ծրագրի ընթացքում երեխաների համար կկազմակերպվեն ուսուցողական ու ճանաչողական դասընթացներ ու էքսկուրսիաներ: ▪ Սոցիալապես անապահով և խոցելի խմբերի համար կիրականացվի հանգստի կազմակերպման ու մշակութային կյանքի իրազեկման ծրագիր (ՀՀ պատմական ու տեսարժան վայրեր): ▪ Նախատեսվում է ակտիվ մասնակցություն ցուցաբերել ՀՀ սփյուռքի նախարարության «Արի տուն» խորագրով ծրագրին՝ հյուրընկալ ընտանիքների հավաքագրման և սփյուռքահայ երիտասարդներին հյուրընկալման համար: ***Բնակարանային-կոմունալ տնտեսության*** ▪ 12 շենքերի բակերում նախատեսվում է կառուցել խաղահրապարակներ՝ տեղադրելով 50 տարբեր տեսակի խաղեր: Նախատեսվում է կառուցել 2 ֆուտբոլի դաշտ: ▪ Բազմաբնակարան շենքերում համատիրությունների և վարչական շրջանի ուժերով համատեղ նախատեսվում է թարմացնել վերելակային պարկը: Այդ առումով նախատեսվում է հիմնանորոգել մոտ 30 վերելակ: Կհիմնանորոգվեն մոտ 60 մուտքեր և շքամուտքեր: ▪ Նախատեսվում է ամբողջությամբ վերանորոգել և թարմացնել Մ.Ավետիսյան պուրակին հարող արտաքին լուսավորության ողջ ցանցը, ինչպես նաև անցկացնել արտաքին լուսավորության նոր ցանց՝ մոտ 10 կմ: ▪ 2012թ. հիմնականում կավարտվեն բակային տարածքների ասֆալտապատումը: Նախատեսվում է վերանորոգել Հասրաթյան փողոցին հարող 2 մայթերը: ▪ Նախատեսվում է Երևան քաղաքի ստորգետնյա ավտոկայանատեղերի կառուցման համալիր ծրագրի շրջանակներում իրականացնել Քանաքեռ 14 փողոցի վերջնամասում (նորակառույց շենքերի հարակից տարածքում) և Հր. Ներսիսյան 4շ. հարակից տարածքում ստորգետնյա ավտոկայանատեղերի կառուցում: ▪ Հետիոտնի տեղաշարժման անվտանգության ապահովման և տրանսպորտի անարգել աշխատանքի նպատակով հետիոտն վերգետնյա անցումներ են նախատեսվում կառուցել Ա. Ահարոնյան-Ռուբինյանց և Ռուբինյանց-Պ. Սևակ փողոցների հատման մասերում: ▪ Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի մուտքերին նախատեսվում է տեղադրել ցուցանակներ:

	▪Ծ. Աղբյուր փողոցի լիարժեք օգտագործման նպատակով նախատեսվում է փողոցի երկաթգծի անցման հատվածի (100 գծմ երկարությամբ) վերականգնման աշխատանքների իրականացում: ***Բնապահպանություն*** ▪Հաղթանակ զբոսայգում նախատեսվում է տնկել մոտ 800 տարբեր տեսակի ծառեր, վերականգնել Կ.Ուլնեցու փողոցի մոտ 200 քմ գազոնը և կառուցել մոտ 50 քմ ծաղկանոց, կառուցել մոտ 1400 քմ մակերեսով նոր սիզամարգեր Դ.Անհաղթ, Ռուբինյանց և Պ.Սևակ փողոցներում: ▪Ոռոգման ջրագծեր կանցկացվեն Հաղթանակի զբոսայգում (մոտ 1000 գծմ), Պ.Սևակի փողոցում (մոտ 800գծմ), Ռուբինյանց փողոցում (մոտ 2000 գծմ), Հաղթանակ զբոսայգու ներքևի՝Սարալանջի հատվածում (մոտ 2000 քմ): ▪Ներկայումս վարչական շրջանում սանիտարական մաքրման ենթակա 684000 քմ տարածքին նախատեսվում է ավելացնել ևս 400 000 քմ-ով՝ ներառելով բակային տարածքները և նրանց հարող բակ մտնող նրբանցքները: ▪Վարչական շրջանի ընդհանուր օգտագործման կանաչ տարածքներն բարելավելու, բարեկարգելու, նոր կանաչ զանգվածներ հիմնելու նպատակով նախատեսվում է իրականացնել Դրոյի և Պ. Սևակի փողոցների հատման մասում (շուկայի հարևանությամբ) գտնող կանաչ տարածքի բարելավում, բարեկարգում և շուկայից դեպի Դրոյի փողոց տանող ճանապարհի բարեկարգում, բակային տարածքների կանաչապատում և բարեկարգում, խաղահրապարակների և մինի ֆուտբոլի դաշտերի կառուցում: